

ՀՅԴ Պաշտօնաթերթ





# ԴՐՕՇԱԿ





Նոյեմբեր N11 (1614)

2009

ԴՐՕՇԱԿ
ՀՅԴ Պաշտօնաթերթ



# ԴՐՕՇԱԿ
ՀՅԴ Պաշտօնաթերթ





“Դրօշակ”
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
**Ռուբեն Հովսեփյան**

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը՝
**Ս. Խաչատրյանի**
Ձեւավորումը՝ **Մ. Հովսեփյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Միհր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

**“Droshak”** monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am



**Խմբագրական**

Հայաստանեան մեր գործունէութեան ուղենիշերը 2

**Հարցազրոյց**

Պահանջատիրութեան
հանգրուանները յաղթահարում են ազգովին 5

**Սոցիալ-տնտեսական**

Ազատագրված շրջանների տնտեսական զարգացումը
Հայաստանի տնտեսական անվտանգության թիվ 1 խնդիր 8

**Հայ դատ**

Հայաստանի անկախության պատերազմը (1918 թ.)
Բաֆվի Էղողեան 13

**Տարածաշրջան**

Նախիջեւան.
թուրք-ադրբեջանական հակասությունների շուրջ 18
Թուրքիան աշխարհաքաղաքական
շահերի խաչմերուկում 24

**Տեսական**

Մտքեր սոցիալիզմի մասին 33

**ՀՀ Ազգային ժողով**

Հայոց ցեղասպանության ուրացման
պատասխանատվության հարցը հայաստանյան
օրենսդրությունում 39

**Հոբելյան**

Մեր մեծ ժամանակակիցը 43

**«Դրօշակ»-ը 100 տարի առաջ**

Ինքնապաշտպանություն 45

**Նոր գրքեր**

Արեւմտահայության
պահանջատիրության հիմնախնդիրները 46

**Պատկերասրահ**

Տարոն Մուրադյան 48



Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY





Digitized by ARF PR Office

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ

2009թ. հոկտեմբերի 23-ին ՀՅԴ Գերագոյն Մարմինը հրապարակեց «ՀՅ Դաշնակցութեան Հայաստանի կազմակերպութեան գործունէութեան ուղենիշերը»: Պլատֆորմի բնոյթ ունեցող այս փաստաթղթում, ընդհանուր գծերով, ներկայացուել են կուսակցութեան առաջիկայ գործունէութեան հիմնական առանցքները, հետեւեալ խնդիրները լուծելու ուղղութեամբ. Ազգային, Սոցիալ-տնտեսական եւ Հասարակական-քաղաքական:

«Ուղենիշերի» այս համապարփակութիւնը յատկանշում է մի ամբողջական, բազմաճակատ շարժում, որով Դաշնակցութիւնը, որպէս լիարժէք այլընտրանքային ընդդիմադիր ուժ, ձգտում է համակարգային փոփոխութիւն իրականացնել Հայաստանում: Այդ փոփոխութիւնների մի բաժինը հնարաւոր է իրականացնել այսօրուանից սկսած, օրէնսդիր դաշտում մեր ներկայացուցչական ռեսուրսներով՝ օրինագծերի մշակման եւ առաջադրման ճամբով: Համակարգային փոփոխութեան հիմնական բաժինը, սակայն, կարելի է իրականացնել գործադիր լծակների միջոցով: Հետեւաբար Դաշնակցութիւնը այս ուղենիշերով եւ նրանից առաջացող շարժմամբ, անխուսափելիօրէն ընթանում է դէպի 2012թ. ԱԺ ընտրութիւններ: Սակայն դա բոլորովին չի նշանակում, թէ Հայաստանի ու հայութեան պետական եւ քաղաքական կեանքի այս զգայուն հանգրուանում լիովին բացառում է արտակարգ իշխանափոխութիւնը: Այս մասին մենք յայտնել ենք մեր դիրքորոշումները, իսկ այժմ փորձենք ներկայացնել եւ վերլուծել «ուղենիշերի» գաղափարական խորքը:

**Ազգային հիմնախնդիրներ** բաժնում արծարծւում է «Հայաստանի եւ հայութեան միասնական օրակարգ» հասկացութիւնը, որը չի պայմանաւորւում միայն այսօրեայ իրադրային քաղաքականութեամբ: Սա սկզբունքային խնդիր է եւ, որպէս այդպիսին, պէտք է իր տեղը գտնի հայ պետական մտածողութեան մէջ: Ներկայիս դրութեամբ ՀՀ սփիւռքի նախարարութեան ողջ գործունէութիւնը կատարւում է լոկ մշակութային-կրթական շրջագծից ներս, ՀՀ արտգործնախարարու-

թիւնը կամայ թէ ակամայ փորձում է ամբողջական հայութեան հիմնահարցերը տեղաւորել միայն արտաքին քաղաքականութեան օրակարգերում, իսկ Արցախի եւ Ջաւախքի հայութեան տեսակէտը սփիւռքահայութեան հարցերի, լուռ ընդհանրապէս գոյութիւն չունի: Համայն հայութեան տեսակէտն հաշուի առնելը հասարակութեանական բնոյթ չունի եւ, կարծես, պատահում է միայն այն դէպքում, երբ Հայաստանի, Արցախի, Ջաւախքի կամ Սփիւռքի հայերը, ճարահատուած, բողոք են յայտնում: Այս առումով այլեւս անհրաժեշտութիւն է «Հայաստանի եւ հայութեան միասնական օրակարգ» հասկացութեան իրականացման մեխանիզմների մշակումը:

«Ուղենիշերի» նոյն բաժնի ***Արցախեան հիմնախնդիր*** ենթաբաժնում ամրագրում են թէ՛ 1991թ. հանրաքուէով հիմնաւորուած ինքնորոշման սկզբունքը եւ թէ՛ 2006թ. ԼՂՀ սահմանադրութեամբ ճշտուած ազատագրուած տարածքների հայապատկանութեան սկզբունքը, որոնք նոյնիսկ փոխզիջման առարկայ դարձնել հնարաւոր չէ: Յատկապէս ազատագրուած տարածքների հարցը ՀՅԴ-ի համար ռազմավարական հարց լինելուց առաւել, ունի ծրագրային նշանակութիւն:

***Հայ-թուրքական յարաբերութիւններ*** ենթաբաժնում յստականշական է Վուդրօ Վիլսոնի իրաւարար վճռի նկատմամբ ՀՅԴ սկզբունքային մօտեցումը, որի հիման վրայ անթոյլատրելի է համարում որեւէ պայմանագրի ստորագրումը, ինչը հարցականի տակ կ'առնի վճռի վաւերականութիւնը: Սոյն իրաւարար վճռի կիրառման հարցը ՀՅԴ ծրագրային եւ նպատակային հասկացութիւնների մաս է կազմել 1978 թուականից: Ներկայ իրադարձութիւնների լոյսի տակ, անհրաժեշտ է նախաձեռնել ՀՀ օրինագծի մշակում, ՀՅԴ «գործունէութեան ուղենիշեր»-ի ոգուն համապատասխան:

***Ջաւախք*** ենթաբաժնում յստականշական է հայաբնակ Ջաւախքի իրաւունքների իրականացման հարցը: Այստեղ բարձրացւում է նաեւ ինքնավարութեան խնդիր, որն էլ ունի ռազմավարական խորը նշանակութիւն ՀՅ Դաշնակցութեան համար: Այս իմաստով, ընդունելի չեն ՀՀ իշխանութիւնների վերապահ ու տատամսկոտ կեցուածքները: Հայաստանի դիւանագէտները դեռեւս դիւանագիտութեան դասեր չեն սերտել իրենց թուրք գործընկերներից: Մի՞թէ չգիտեն, թէ Թուրքիան որքան է անզիջում Կիպրոսի թուրքերի անկախութեան հարցում: Մի՞թէ չգիտեն, որ նոյն Թուրքիան ուղղակի եւ անուղղակի հովանաւորում է բուլղարաբնակ թուրքերի էթնո-կրօնական իրաւունքների եւ ինքնավարութեան պահանջները ու դեռ միջպետական յարաբերութիւններ է պահպանում Բուլղարիայի հետ: Հայաստանի դիւանագէտները դեռ պէտք է դասեր սերտեն իրենց ադրբեջանցի գործընկերներից: Ադրբեջանն այսօր Իրանի հետ միջպետական ամենաբարձր յարաբերութիւններ ունենալով հանդերձ, հովանաւորում, ղեկավարում է պանթուրքիստական, անջատողական շարժումներն Իրանում: Մի՞թէ չեն նկատում, որ Ադրբեջանը չի փորձում թաքցնել իր այդ բացայայտ հովանաւորչութիւնը ու դեռ հիպատտացնում է բացում պատմական Ատրպատականի կենտրոնում՝ Թավրիզում:

Ուստի՝ Հայաստանի արտաքին գործերի գերատեսչութիւնը պէտք է ազգային շահերի հիման վրայ մշակի իր սկզբունքային կեցուածքը Ջաւախքի հարցում:

***Սփիւռք*** ենթաբաժնում ՀՅԴ ԳՄ-ն, փաստօրէն, հաստատագրում է իր գաղափարական դիրքորոշումը՝ հայութեանը որպէս մէկ ամբողջութիւն դիտելու հարցում: Հայ-թուրքական յարաբերութիւնների ներկայ փուլում անհրաժեշտ է պայքարել բոլոր այն միտումների դէմ, որոնց նպատակն է տարանջատ ներկայացնել մեր ազգի հատուածները:

**Սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ** բաժնի նախաբանում արտայայտուած է ազգային եւ սոցիալական հիմնախնդիրների փոխկապակցուածութեան սկզբունքը: Այս նշանակալից սկզբունքի տեսական կիրարկմամբ են ընդհանրապէս պայմանաւորում՝ մի կողմից Դաշնակցութեան ազգային գաղափարի եւ ազգայնականութեան, միւս կողմից՝ Դաշնակցութեան սոցիալիստական գաղափարի եւ ծայրայեղ ձախ գաղափարախօսութեան տարբերութիւնները:

Սոյն մեկնակէտից ելնելով, **Սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ** բաժնում արծարծում են ազգային իրականութիւնից բխած որոշ սոցիալական առաջարկներ, ինչպիսիք են ***երեխաների ծննդեան յա-***

***ջորդականութեամբ պայմանաւորուած խրախուսման ամբողջական համակարգի ներդրմամբ***, կամ ***բազմազաւակ ընտանիքներին պետական աջակցութեան, ժողովրդագրական երիտասարդացում ապահովող եւ ներգաղթը խրախուսող ազգային ծրագրի մշակման եւ գործադրման*** մասին պահանջները:

Այս բաժնում առաջադրուած դասական սոցիալիստական գաղափարների առկայութիւնը, ինչպէս ***հանրակրթական արդիւնաւէտ, անվճար կրթութեան երաշխաւորման*** եւ ***բժշկական ծառայութիւնների հաւասար, համընդհանուր հասանելիութեան ապահովման*** առաջարկները կամ ***աշխատանքի իրաւունքի ամբողջական իրացումը*** եւ ***աշխատանքի ժամային նուազագոյն դրոյքաչափի համապատասխանեցումը երկրում միջին աշխատավարձի ժամային դրոյքաչափի առնուազն կէսին***, իրականում վկայում են ցաւալի այն իրողութիւնը, որ մեր նորանկախ հայրենիքը դեռ հեռու է զարգացած պետութիւններում առկայ նուազագոյն ստանդարտներից: Եւրոպական երկրների պատմական փորձը ցոյց է տալիս, որ կենսամակարդակային այս կարգի հարցերը, յատկապէս աշխատանքային, հանրակրթական եւ առողջապահական հիմնախնդիրները, հիմնականում, լուծուել են սոցիալիստական գաղափարներ կրող ուժերի շնորհիւ: Համոզուած ենք, որ հայաստանեան հասարակութիւնն էլ, անխուսափելիօրէն, անցնելու է այդ ճամբով:

Իսկ ***սեփականութեան իրաւունքի պաշտպանութեան*** գաղափարը, հակառակ ընդհանրացուած տեսակէտի, ոչ թէ կապիտալիստական, այլ զուտ սոցիալիստական հասկացութիւն է: Թերաճ կապիտալիստական համակարգերում, ինչպիսին է Հայաստանինը, յաճախ ոտնահարւում է սեփականատիրութեան իրաւունքը: Անկառավարելի կապիտալի ուռուցքային աճեցումը ազատ շուկայական պայմաններում, առատօրէն եւ ապօրինաբար քայքայում է ոչ միայն ազգային-պետական եւ հաւաքական-կոոպերատիւ սեփականութիւնները, այլեւ հենց մասնաւոր-անհատական սեփականութիւնը: Սեփականատիրութեան գաղափարի ոտնահարմանը յաջորդում է փոքր եւ միջին ձեռնարկատիրութիւնների փոշիացման երեւոյթը:

Այս բաժնում առաջադրուած որոշ գաղափարներ ունեն արդի սոցիալիստական եւ սոցիալ-դեմոկրատական բնոյթ: Այսպէս. ***սոցիալական բնակարանային ֆոնդը*** հենց այն արդիական առաջադրանքներից է, որ այսօր արծարծւում է հոլանդական, շուեդական եւ մի շարք այլ եւրոպական սոցիալիստական կուսակցութիւնների պլատֆորմներում:

ՀՅԴ գործունէութեան սոցիալ-տնտեսական ուղենիշը ՀՅԴ սոցիալիստական գաղափարի բազմաթիւ տարրեր պարունակելով հանդերձ, այնուամենայնիւ կարող էր առաւել լիարժէք լինել` հարկային համակարգում դիֆերենցման քաղաքականութեան կիրառման հարցի արծարծման դէպքում:

Յաջորդ` ուղենիշերի **Հասարակական-քաղաքական** բաժնում արծարծուած հարցերից երեւում է, որ Հայաստանը ժողովրդավարական օրէնքների պակաս չունի, պարզապէս տառապում է օրէնքների իրականացման մեխանիզմների չգոյութեան եւ անարդիւնաւէտութեան իրողութիւնից:

Ի թիւս համակարգային բարեփոխումներ եւ համապատասխան մեխանիզմների կիրառում ենթադրող մի շարք առաջարկների, հանդիպում ենք նաեւ ***քաղաքական եւ տնտեսական գործառոյթների զուգակցումը բացառելու*** առաջարկին: Սա, ըստ էութեան, սոցիալ-դեմոկրատիայի առանցքային սկզբունքներից մէկն է, որն այսօր, մանաւանդ ներկայ միջազգային ֆինանսական ճգնաժամի պայմաններում, բարձրացւում է լիբերալ-դեմոկրատական այն մօտեցման դէմ, ինչը ձգտում է պետական-քաղաքական դաշտի ղեկավարման գործը յանձնել ֆինանսա-գործարարական շրջանակներին:

Այս բաժնում արծարծւում է նաեւ ***100% համամասնական ընտրակարգի սահմանման*** հարցը, որն ինչ խօսք, էապէս լիակատար ժողովրդավարական կարգ է, որով տնօրինւում են եւրոպական բազմաթիւ պետութիւնների օրէնսդիր եւ նոյնիսկ գործադիր ոլորտները: Համամասնական ընտրակարգի իրականացման դէպքում քաղաքական մրցակցութիւնները հիմնաւորուելու են գաղափարախօսական պայքարով:

«ՀՅ Դաշնակցութեան Հայաստանի կազմակերպութեան գործունէութեան ուղենիշերը» սոսկ քաղաքական փաթեթ չէ, այլ գաղափարական փաստաթուղթ, որով ուրուագծւում է ՀՅԴ ազգային, սոցիալիստական եւ ժողովրդավարական արժէքների համակարգային ամբողջութիւնը, այդ արժէքների ներքին կապերն ու փոխպայմանաւորուածութիւնը:



# Պահանջատիրութեան

## հանգրուանները յաղթահարւում են ազգովին

*«Դրօշակի» հարցերին պատասխանում է ՀՅԴ Բիւրոյի անդամ, Համազգային կրթամշակութային միութեան ատենապետ ընկ. Մկրտիչ Մկրտչեանը*

**«Դրօշակի» այս տարուայ չորրորդ պրակում հրապարակուեց թուրք մտաւորական Տոլգա Էրենի «Անատոլիայում մի ուրուական է պտտւում» ուշագրաւ յօդուածը: Նա իր ազգին, իր պետութեանը կոչ է անում դիմել մեղքի թողութեան փրկարար միջոցին: «Եթէ չլինի մեղքի թողութեան խնդրանքը,- գրում է նա,- ինչպէ՞ս կարող է այս երկիրը մաքրուել, շիտակ ուղի գտնել»: Օգտուելով Տոլգա Էրենի այս արտայայտութիւնից՝ ցանկանում ենք իմանալ Ձեր կարծիքը. կարելի՞ է բարիդրացիական յարաբերութիւնների հաստատում ակնկալել մի երկրից, որը յամառօրէն չի փորձում մաքրուել, շիտակ ուղի գտնել՝ մեղքի թողութեան ամենազօր ուժով:**

- Բնականաբար կարելի չէ, եւ այս պարագան այսօր թուրք հասարակութեան հիմնական խնդիրներէն մէկն է: Տ. Էրենը եւ իրմէ առաջ ու իրեն պէս շատեր անդրադարձած են այս հարցին: Շուրջ երկու տասնամեակ է, որ Թուրքիոյ մէջ մենք ականատես ենք երեւոյթի մը, որ ուղղակի առնչութիւն ունի հայութեան հետ: Նախորդ դարու ութսունական թուականներու սկիզբը տեղի ունեցած զինուորական պետական հարուածէն ետք սկսաւ հալածանքը յատկապէս ձախակողմեան ուսանողութեան դէմ: Անոնցմէ շատեր գաղթեցին արտասահման, մասնաւորաբար՝ Գերմանիա, ուր կը գտնուէր արդէն թուրք աշխատաւորներու հոծ բազմութիւն մը: Այդտեղ անոնք իրենց թրքական քաղաքական գործունէութեան կողքին անխուսափելիօրէն զբաղուեցան նաեւ տեղական քաղաքականութեամբ: Իսկ Գերմանիան երկիր մըն է, ուր ամէն քայլափոխին կը զգացուի հրէական ողջակիզման ներկայութիւնը: Այդ տարիները զուգադիպեցան նաեւ հայկական հարցի վերանորոգ արծարծման: Իր կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով թերեւս թուրք յառաջադէմ երիտասարդութիւնը դէմ յանդիման կու գար հայոց ցեղասպանութեան հարցին հետ, քանի իր հայրենիքէն ներս այդ նիւթը արգիլուած նիւթ էր: Եւ ան՝ գերման հասարակութեան այդ մթնոլորտին մէջ հասաւ այն եզրակացութեան, թէ Թուրքիոյ հանրապետութիւնը հիմնուած է հայ ժողովուրդի դիակին վրայ, թէ այդ պետութեան պաշտօնական ամբողջ պատմութիւնը բազմաթիւ մեծ ու փոքր կեղծիքներու կոյտ մըն է: Իրական պատմութիւնը որոնելը իրեն համար դարձաւ նպատակ այն հաստատ հաւատքով, թէ Թուրքիոյ մէջ իրաւ ժողովրդավարութեան հաստատումը անկարելի է առանց հայոց ցեղասպանութեան ընդունման: Այդ հաւատքը սակայն դեռ մինչեւ այսօր մուտք չէ գործած Թուրքիոյ ղեկավար խաւի ուղեղներուն ու հոգիներուն մէջ: Ես վստահ եմ, սակայն, որ ատիկա օր մը անպայման տեղի պիտի ու-



նենայ, բայց նախքան անոր իրականացումը բարիդրացիական յարաբերութիւններու հաստատումը հոգեբանօրէն կարելի չէ։ Իսկ երեւութական՝ կեղծ ժպիտներով յատկանշուող հաշտութիւնը այդ գործընթացը պարզապէս կ՚ուշացնէ, քանի որ երեւութականն ու կեղծը իբրեւ իրական ծախելը միշտ ալ կարելի եղած է քաղաքականութեամբ զբաղող մարդոց համար, իսկ բուն հարցերը կը շարունակեն մնալ անլոյծ։ Հետեւաբար պարտադիր «բարիդրացիական» յարաբերութիւնները պարզապէս կ՚ուշացնեն երկու ժողովուրդներու հաշտեցման գործընթացը։

Ստորագրուած արձանագրութիւններուն դէմ հայկական եւ թրքական հասարակութիւններու բուռն ընդդիմութիւնը արդէն լաւագոյն ապացոյցն է այս իրողութեան։ Վերջիվերջոյ ժողովուրդները բնազդաբար խաղաղութեան կողմնակից են։ Երբ խաղաղութիւն բերող համաձայնութիւն մը նոյնքան բնազդաբար կը մերժուի, ասիկա կը նշանակէ, թէ տակաւին լուծուելիք հարցեր կան։

**- Մի այլ թուրք մտաւորականի՝ Նոբելեան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուկի «Ձիւն» վէպը վերջերս հրատարակուեց Երեւանում՝ Համազգայինի օժանդակութեամբ։ Շատերի համար տարօրինակ էր այս փաստը։ Ինչո՞ւ Համազգայինը որոշեց հրատարակել յատկապէս թուրք գրողի վէպը։**

- Որովհետեւ Օրհան Փամուկ ճիշդ այն մտաւորականներէն է, որ հետեւողական կերպով կը հետապնդէ թուրք հասարակութեան մտքի ու հոգիի մաքրումը՝ «կաթարսիսը»։ Ես ի վիճակի չեմ գնահատելու այդ հեղինակի գեղարուեստական արժէքը, սակայն ինք իր հասարակութեան հիմնական խնդիրներէն մէկը սեղանի վրայ դնող է։ Փամուկ արեւելեան ժողովուրդներու հոգեկան արդի երկպառակութեան խորունկ ուսումնասէրն է։ Գրեթէ իր բոլոր հատորներու նիւթը թրքական հոգիներէն ներս արեւմտեան ու արեւելեան քաղաքակրթութիւններու միջեւ տարուող յարատեւ պատերազմի օրագրութիւնն է, որ նոր պատերազմ չէ։ Այդ պատերազմը սկսած է օսմանցիներու կողմէ Պոլսոյ գրաւումով, անոր հետեւող բիւզանդական քաղաքակրթութեան ժառանգումով ու կը շարունակուի մինչեւ օրս. պայքարն է նորարարութեան եւ աւանդապաշտութեան, գիտութեան եւ ճակատագրապաշտութեան, գեղեցիկի տարբեր ընկալումներու, ժողովրդավարութեան ու հեղինակապաշտութեան, յաւիտենական պայքարը՝ Աթէնքի եւ Սպարտայի միջեւ։ Հոգեկան այդ երկպառակութիւնը կը վերաբերի նաեւ հայերուս։ Եթէ թրքական հասարակութեան մտաւորական խաւը արեւելքցին է, որ կը ձգտի դէպի արեւմտեան արժէքներ, ապա մենք արեւմտականացածներն ենք, որոնք կը ձգտին պահել արեւելեան որոշ արժէքներ։

Իհարկէ, Փամուկի գրականութեան այս յատկանիշը չէ, որ քաջալերեց Համազգայինը հրատարակելու հեղինակի «Ձիւն»-ի հայերէն թարգմանութիւնը. թուրք հեղինակի մը գործը հրատարակելը Համազգայինի ծրագիրներուն մէջ չկայ, նոյնիսկ եթէ ան հանճարեղ ըլլայ կամ Նոբելեան մրցանակի դափնեկիր. մանաւանդ՝ որ մեզի յաճախ կը պակսին հայկական արժէքաւոր գիրքեր հրատարակելու համար անհրաժեշտ նիւթական միջոցները։ Սակայն ըսեմ անմիջապէս, որ Համազգայինը մշակութային-գեղարուեստական գործունէութեան կողքին ունի նաեւ մշակոյթի ճամբով Հայ Դատին նպաստելու նպատակ ու պարտաւորութիւն։ Իսկ «Ձիւնը» դիմացինին դաշտին մէջ (թուրքը կրկին տիրական է) այդ ուղղութեամբ կատարուած կարեւոր յառաջխաղացք է։ «Ձիւնը» (թրքերէնով՝ «Կար») նոյնպէս կը զբաղի Փամուկի դասական նիւթով. այս անգամ քաղաքական իսլամի եւ քեմալական աշխարհիկ կարգերու միջեւ բախումին մասին է խօսքը։ Հիմնական հերոսի անունը Կա է, իսկ վէպի անցուդարձերու բացարձակօրէն մեծ մասը տեղի կ՚ունենայ Կարսի մէջ. Կա, Կար, Կարս. փամուկեան յատկանշական տառախաղ։ Ինչո՞ւ համար Կարսի մէջ, երբ այդպիսի նիւթի մը համար աւելի յարմար վայրեր կարելի էր ընտրել. յայտնի չէ։ Վէպի նիւթը որեւէ կապ չունի հայութեան ու Հայաստանի հետ, բայց ընթերցողը էջերը դարձնելով կը նկատէ, որ «հայ» կամ «Հայաստան» բառերը շուրջ 40 անգամ տեղ գտած են վէպին մէջ. կարծես քաղաքը մասնաւոր ընտրուած ըլլար հայութեան մասին խօսելու պատրուակ ստեղծելու համար։ Անգամ մը գեղեցիկ տան մը նկարագրութեան առիթով, ուրիշ անգամ մը ուրուական Անի քաղաքին մասին խօսելով, տեղ մը հայկական թատրոնի եւ արուեստի մասին ակնարկելով, իսկ նաեւ՝ «ի՞նչ պատահեցաւ Անատոլուի ու Կարսի մէջ ապրող միլիոնաւոր հայերուն»։ Եւ ցեղասպանութեան նուիրուած բաժինը թանգարանի վերածուած հայկական եկեղեցիին մէջ, ուր զբօսաշրջիկները կ՚ակնկալեն լսել թուրքերու կողմէ հայերու վրայ գործուած ոճիրներու մասին, սակայն այդտեղ կը լսեն ճիշդ հակառակը։ Եւ փամփուշտը, որ հին թատրոնի մէջ տեղի ունեցած հրացանաձգու-

թեան ընթացքին, հսկայ ծակ մը կը բանայ քսաներորդ դարու առաջին տասնամեակին ապրած մեծահարուստ Գրիգոր Ճիզմեճեանի անունը կրող անձնական օթեակի պատին վրայ: Մէկ խօսքով՝ Կարսը, եթէ հիմա հայկական քաղաք չէ, ապա՝ ան հայկական քաղաք եղած է ատենին: Ասիկա փաստող քաղաքակրթական ու մշակութային հետքերը բազմաթիւ են ու անհերքելի: Իսկ երբ ան հայկական էր, այդտեղ կեանքը աւելի հաճելի էր ու բարձրամակարդակ:

Թուրքիոյ մէջ այսպիսի ձայներու բարձրացման մասին հայ հասարակութիւնը իրազեկ պէտք է պահել: «Ձիւն» գործի հրատարակումը Համազգայինի համեստ նպաստն է այդ ընթացքին մէջ:

**- Մեղքի թողութեան խնդրանքը, սովորաբար, Աստծուն է ուղղուած լինում, եւ Աստուած է ներում կամ չի ներում գործած մեղքը: Մեր դէպքում՝ թուրքի թողութեան խնդրանքը հային պիտի լինի յղուած: Մենք պատրա՞ստ ենք ներելու եւ ի՞նչ գնով:**

- Հայութեան դէմ գործուած ոճիրին հետեւանքը կը կազմէ անհատական անհամար ողբերգութիւններու շարան մը: Բայց միայն այդքան չէ, քանի առաջնորդեց նաեւ ամբողջ ազգի մը հայրենազրկման: Ուրեմն կայ նաեւ ազգային ողբերգութեան խնդիր: Ցեղասպանութիւնը միայն բարոյական հարց չէ, որ միայն ներողութիւն բառի արտասանութեամբ անցնի մոռցուող անցեալի տետրակներուն մէջ: Քաղաքական կեանքին մէջ ներողութիւն խնդրել կը նշանակէ որոշ պահանջներու գոհացում տալ: Ազգին անունով խօսողները կ'ըլլան կառավարութիւններ, կուսակցութիւններ, մեր պարագային նաեւ կրօնական եկեղեցին՝ պատմական պատճառներով: Երբ մասամբ կամ ամբողջութեամբ գոհացում տրուի ազգի պահանջներուն, ազգի հաւաքական պատասխանատուութեան կրողները կրնան այդ նիւթականացած ներողութեան խնդրանքը ընդունիլ կամ չընդունիլ: Իսկ անհատական ողբերգութիւններու պարագային, կը կարծեմ, որ հատուցումն ու ներողութիւնը հարց չեն լուծեր. կը նմանի արկածի հետեւանքով զաւակի մը մահուան դիմաց մօր մը ապահովագրական ընկերութենէ մը ստացուած վնասուց հատուցման: Ցաւը կը մնայ ցաւ ամբողջ կեանքի ընթացքին փոխանցուելով նաեւ յաջորդ սերունդին: Հայոց ցեղասպանութեան պարագային կը գտնուինք հանգրուանի մը, ուր անհատական ներողութիւններու ժամանակն արդէն անցած է, իսկ հաւաքականութեան անունով ներողութիւն խնդրող չկայ, որպէսզի ներող ըլլայ: Հատուցում առաջարկող չկայ, որպէսզի հատուցում ընդունող ըլլայ: Կը մնայ, որ պահանջատէրերը մինչեւ վերջ շարունակեն պահանջել իրենց իրաւունքը:

Պէտք է յիշել անշուշտ, որ կարճ ժամանակ մը առաջ խումբ մը թուրք մտաւորականներու նախաձեռնութեամբ արտայայտուած շուրջ 30000 թուրք անհատներու հրապարակային ներողութիւնը յուզիչ եւ ճիշդ ուղղութեամբ կատարուած գործողութիւն ըլլալով հանդերձ, չի համապատասխաներ հաւաքական թողութեան խնդրանքի պայմաններուն, քանի ասիկա չէ կատարուած հաւաքականութեան ամբողջականութեան պատասխանատուութիւնը կրող կառավարութեան կողմէ: Միւս կողմէ պէտք է ընդունիլ, որ այդ գործողութիւնը կը փաստէ նաեւ, որ թուրք հասարակութեան մէջ նոր խմորումներ կան, որոնք կրնան առաջնորդել ցանկալի հետեւանքներու: Այս պատճառով իսկ պէտք չէ այս ընթացքը խանգարել կամ նոյնիսկ՝ կասեցնել արձանագրութիւններ ստորագրելով կամ անտեղի յայտարարութիւններ կատարելով: Թուրքիոյ հասարակական պատկառելի ներկայացուցիչներու խոստովանութեամբ իսկ, իրենք սկսած են հայկական հարցերով զբաղիլ, երբ արտասահման իրենց ճամբորդութիւններու ընթացքին լսած են շահագրգիռ հայկական շրջանակներու փաստարկումները: Այդ աշխատանքը պէտք է շարունակուի մինչեւ դիմացինի պաշտօնական ներողութիւնը՝ հատուցումը:

**- Արդեօք ժամանա՞կը չէ, որ հայ հասարակութիւնը, իր բոլոր միջոցներով ու կազմակերպութիւններով, պատրաստուի «մեղքի թողութեան» եւ «ներման» այս հանդիպմանը: Ի՞նչ կարող է անել Համազգայինը՝ իր բաժին նպաստը բերելու հնարաւոր այս հանդիպմանը:**

- Այս հարցումին, կարծեմ, մասամբ պատասխանած եմ: Պաշտօնական Թուրքիան մինչեւ այսօր մերժողի դիրքին մէջ է: Նոյն պաշտօնական Թուրքիոյ եւրոպական նկրտումները զինք կը դնեն որոշ պարտաւորութիւններու տակ, որոնք կ'արտօնեն նախապէս արգիլեալ հարցերու քննարկումը. անոնց կարգին է հայոց ցեղասպանութիւնը: Հայկական կողմը ընելի՛ք ունի այս կացութեան մէջ: Եթէ քաղաքական գործունէութեան համար դեռ կանուխ է, ապա մշակութային դաշտը շատոնց բաց է: Մշակոյթի ծառաները իրենց ձեռքին մէջ ունեցած միջոցներով լաւագոյն մթնոլորտ ստեղծողներն են: Հետեւաբար հայկական համապատասխան կողմերը, որոնց կարգին նաեւ Համազգայինը, պէտք է ձեռնարկեն նպատակաուղղուած գործունէութեան: Ծրագրելու ժամանակը աւարտելու վրայ է. պէտք է անցնիլ գործի: Մշակութային հանդիպումը անպայման նպաստաւոր կ'ըլլայ հայութեան համար, քանի իրաւունքը ի՛ր կողմն է: Հա՛յութիւնը տասնամեակներ շարունակ պայքարեցաւ արտասահմանի մէջ իր հարցերը վերարծարծել տալու համար: Ժամանակը եկած է նոյն աշխատանքը Թուրքիոյ մէջ իսկ տանելու: Գետինը պատրաստ է արդէն այդպիսի աշխատանքներու համար:

Պէյրութ
Հոկտեմբեր 2009

# Ազատագրված շրջանների
## տնտեսական զարգացումը Հայաստանի տնտեսական անվտանգության թիվ 1 խնդիր

Նորայր Մանասերյան
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

### Հայացք բերդապարսպի ներսից և դրսից

Ադրբեջանական ԽՍՀ պետական վիճակագրական տվյալներով 1985 թ., այսինքն ղարաբաղյան գոյամարտի նախօրեին, ԼՂՀ անմիջական շրջապատի շրջաններում բնակվում էր շուրջ 475 հազար մարդ, ԼՂՀ տարածքում՝ շուրջ 145 հազար, այդ թվում Շուշիում՝ շուրջ 20 հազար մարդ: Այսօր Արցախի բնակչության թիվը մոտավոր տվյալներով չի անցնում 110-120 հազարից, այդ թվում Շուշիի բնակչությունը՝ շուրջ 3 հազար, իսկ ազատագրված շրջանների, ավելի ճիշտ՝ դրանցից երկու հիմնական շրջանների (Քաշաթաղի մոտակայքում) բնակչությունը մոտավոր տվյալներով չի անցնում 10-15 հազարից, և կարծես թե սառել-կանգնել է մի կետի վրա: Դա խորը մտահոգություն է պատճառում: Հարց է առաջանում, և այդ հարցը չեն թաքցնում Հայաստան և Արցախ այցելող պետական և ոչ պետական պատվիրակությունները, ինչի՞ համար էր ձեր ազատագրական պատերազմը, եթե ազատագրած տարածքները շուրջ 1,5 տասնամյակ պետք է թողնեիք անմարդաբնակ ու ամայի:

Հայաստանի ազգային անվտանգությունը բազմաբևեռ, բազմանկյուն խնդիր է՝ նման բազմանկյուն մի բերդակառույցի: Այսօր այդ կառույցի ամենաթույլ օղակը, մեր համոզմամբ, երկրի լեռնային շրջանների մերկացումն է, բնակչության գերկենտրոնացումը Երևանում և Արարատյան դաշտավայրում: Դա կարելի էր շատ թե քիչ բնական համարել, եթե այն տեղի չունենար լեռնային շրջանների հաշվին: Ասածը առավել ևս վերաբերում է Լեռնային Ղարաբաղին և նրա շրջապատի ազատագրված շրջաններին: Նկատենք, որ նշված 3 աշխարհագրական տարածքները Հայաստանի միասնական տարածք են և միայն այդ մոտեցմամբ կարելի է լուրջ մտածել նրա անվտանգության մասին: Այսօր ազատագրված շրջանների ամայությունը նույնքան վտանգավոր է Հայաստան պետության համար, որքան ՀՀ լեռնային շրջանների բնակչության արտահոսքը և բնակավայրերի չափազանց խախուտ (տկարացած) վիճակը: Առավել սուր և կենսական նշանակություն է ձեռք բերում (ճիշտ կլիներ ասել՝ վաղուց ի վեր ձեռք է բերել) ազատագրած շրջանների բնակեցման խնդիրը, քանի որ պահել-չպահելու հարցը դուրս է եկել միջազգային սպեկուլյատիվ խոսակցություն-

ների և վերածվել միջազգային ուժերի պարտադրած սպառնալիքի: Հայաստանը թևակոխել է Արցախյան գոյամարտի 2-րդ փուլ, երբ նրա ամբողջ ներուժը պետք է գործի դրվի ազատագրվածը պաշտպանելու և պահելու համար: Շատ բան թերևս մեզանից կախված չէ, սակայն մի բան հաստատապես կախված է. դա ազատագրված շրջանների արագ բնակեցումը և տնտեսական յուրացումն է: Եվ այսպես, ինչո՞ւ չեն բնակեցված ազատագրված շրջանները: Դա բացատրվում է երեք հիմնական պատճառներով.

1. Նոր շրջանների բնակեցման պետական ծրագրի, ընդհանրապես պետական ծրագրի իսպառ բացակայությամբ: Այդ կարևորագույն գործը մատնված է տարերքի քմահաճույքին, կրում է տարերային բնույթ:

2. Ազատագրված շրջաններում հաստատված նոր, հայաստանյան պաշտոնյաների հողի բյուրոկրատական բնույթով, կաշառակերությամբ և այլ հակապետական բարքերով, որոնք ուղղակիորեն խոչընդոտում են կամավոր նորաբնակներին հավատով հաստատվել նոր բնակավայրերում:

3. Վերջապես հայաստանյան տեղական իշխանությունների և ոչ իշխանական կազմակերպությունների բացարձակ անտարբերության վերաբերմունքով այս կարևոր ազգային հարցի նկատմամբ:

Փախստականների և բնակչության միգրացիայի պետական կոմիտեն, որը գործում է շուրջ 2 տասնամյակ, մատնված է անգործության, քանի որ նրա կողմից մշակված Արցախի և նոր շրջանների տեղաբնակեցման ծրագիրը մնում է թղթի վրա կամ իրականացվում է կրիայի քայլերով, նվազագույն պետական միջոցների բացակայության պատճառով:

Ի վերջո, ոմանց մոտ այն տպավորությունն է ստեղծվում, որ արյամբ, հրով ու սրով ազատագրված շրջաններում հայերիս ներկայությունն ընդամենը ժամանակավոր և վաղանցիկ երևույթ է: Անհրաժեշտ է օր առաջ կոտրել այդ թերարժեք հոգեբանությունը, մշակել ազատագրված շրջանների արագ բնակեցման և տնտեսական զարգացման պետական քաղաքականությունը և անհապաղ ձեռնամուխ լինել դրա իրագործմանը, նկատի առնելով այդ հարցի ռազմավարական նշանակությունը Հայաստանի և Արցախի անվտանգության համար:

Հայաստանի անվտանգության ռազմավարական շահերից ելնելով, այդ խոսքի անմիջական իմաստով, առաջիկա 10-15 տարում, այսինքն արցախյան գոյամարտի մեկ սերնդի կյանքի ընթացքում, Արցախի և ազատագրված շրջանների բնակչությունը պետք է հասցվի մեկ միլիոն մարդու, որի դեպքում հնարավոր կլինի իրականացնել Հայաստանի և Արցախի սահմանների պաշտպանությունը սեփական ուժերով, ինչպես նաև լուրջ հիմքի վրա դնել Արցախի և նոր տարածքների ռեսուրսների տնտեսական յուրացման գործը:

Այս կենսական խնդիրը պահանջում է անհապաղ ձեռնամուխ լինել հստակ նպատակային ծրագրի ստեղծմանը:

Չհավակնելով այդ խնդրի լուծմանը, նշենք դրա մի քանի հիմնական առաջնահերթ կետերի ուրվագծերը.

1. Պետական ֆինանսական հիմնադրամի ստեղծում, ելակետ ունենալով տարեկան առնվազն Քաշաթաղի մարզում հազար նորաբնակների բնակեցման անհրաժեշտությունը:

2. Այդ նպատակով հստակ (Արցախ) հիմնադրի ստեղծումը, որը պետք է հավաքագրել հայկական սփյուռքի ջանքերով[1]:

3. Ազատագրված շրջաններում ազատ տնտեսական գոտու որոշ տարրերի կիրառում, որը կնպաստի Հայաստանի և Սփյուռքի գործարարների ներդրումների հոսքին դեպի այդ շրջաններ:

4. Հայաստանի բնակչության օրինազանց տարրերի, հասարակության մեջ չինտեգրված նախկին քրեականների, դասալիքների, թափառաշրջիկների վերաբնակեցման կազմակերպում ազատագրված շրջաններում: Հիշեցնենք, որ այդ եղանակով են բնակեցվել և զարգացել ԱՄՆ-ի բազմաթիվ շրջաններ 18-րդ դարում:

5. Հստակ ուշադրություն պետք է դարձվի ազատագրված շրջանների գյուղատնտեսական հողերի արդյունավետ բաշխմանը և օգտագործմանը:

## Կանխել հողի սեփականաշնորհման հայաստանյան ձախորդ փորձի կրկնությունը

Ազատագրված շրջաններում այդ վտանգավոր միտումն արդեն իսկ գծագրված է: Ակնհայտ է, որ այս մարզի նորընծա ղեկավարներին բնավ չի հետաքրքրում, թե հողի և մյուս արտադրամիջոցների հախուռն և համատարած սեփականաշնորհումը ինչ ծանր հետևանքներ բերեց Հայաստանի գյուղացիության և գյուղի գլխին, և այդյոք, ե՞րբ կհաջողվի հաղթահարել այդ հետևանքները:

Հիշեցնենք, որ Հայաստանի ներկայիս հանրապետության որոշ արկածախնդիր առաջնորդներ ծրագրում էին դրանով թռիչք կատարել զարգացած սոցիալիզմից դեպի 20-րդ դարի զարգացած կապիտալիզմ: Իրականում դա թռիչք էր հողի (և ոչ միայն հողի) պետական սեփականությունից դեպի նույնքան համա-

---

[1] Նման հիմնադրամ գոյություն ուներ Սփյուռքում 1990-ական թվականներին, սակայն հարկադրվեց այն միավորվել «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ:

տարած մասնավոր սեփականություն: 880 խոշոր հանրային (պետական և կոլեկտիվ) գյուղձեռնարկությունների փլատակների վրա ստեղծվեցին ավելի քան 330 մանր և գաճաճ գյուղացիական տնտեսություններ: Դրանց թիվն այսօր անցնում է 380 հազարից, որոնք կրակն են ընկել իրենց տրված ավելի քան մեկ մլն. մանր հողակտորների ձեռքը:

Սեփականության և տնտեսության մյուս ձևերը և եղանակները ինչպես չկային համայնավարական ժամանակներում, այնպես էլ չկան այսօր, «ազատ շուկայական» համակարգի օրոք: Իրոք, պատմական թռիչք կատարվեց, սակայն դա թռիչք էր ոչ թե դեպի կապիտալիզմ, այլ դեպի հեռավոր միջնադար:

Այս բոլորի անմիջական արդյունքը եղավ այն, որ Հայաստանի Հանրապետության մշակելի հողատարածությունների 40 տոկոսից ավելին արդեն 1,5 տասնամյակ դուրս են մնացել գյուղատնտեսական շրջանառությունից, իսկ ավելի ճիշտ՝ վերածվել են արոտավայրերի, իսկ ավելի ստույգ՝ թունավոր խոտաբույսերի բուծարանի (քանի որ անխնամ-անմշակ արոտավայրը աստիճանաբար լցվում է թունավոր մոլախոտերով), այսինքն ոչ պիտանի են դառնում նաև անասնապահության համար: Իսկ վերջինիս վիճակի մասին են խոսում նաև հետևյալ թվերը. Հայաստանում դեռևս 55-60 տարի առաջ կառուցված կապիտալ անասնաշենքերը հանրային հոտի սեփականաշնորհումից հետո բառացիորեն դատարկվել և թալանվել են, իսկ դրանք կազմում են ավելի քան 3000 տիպային քարե շինություն, որոնցից այսօր մնացել են պատերը և տանիքների կմախքը: Ամայացած հողերը և թափուր մնացած անասնաշենքերը Հրանտ Բագրատյան–Լևոն Տեր-Պետրոսյանական տխրահռչակ ագրարային, իսկ ավելի ճիշտ կլինի ասել՝ հակաագրարային հուշարձաններ են:

Մենք այս հակիրճ պատմական ակնարկով ցանկացանք միայն զգուշացնել, թե ինչու՞ չի կարելի այլևս թույլ տալ հայաստանյան տապալված սեփականաշնորհման փորձի կրկնումը նոր յուրացվող շրջաններում, քանի որ դա հավասարազոր կլինի մեռելածինի վերակենդանացմանը:

Տեղին է հիշել ժողովրդի խոսքը՝ «վնասի կեսից էլ հետ կանգնես, էլի օգուտը քոնն է»:

## Զարգացնել հողատիրության բոլոր ձևերը

Աշխարհի փորձը վկայում է, որ այդ ձևերը հիմնականում երեքն են. մասնավոր, համատեղ (կոլեկտիվ, կոոպերատիվ) և պետական, դա է հաստատում նաև Հայաստանի պատմությունը:

Պետական հողային ֆոնդը պետք է ընդգրկի.

* սահմանամերձ հողային տարածքներ,
* երթևեկելի (տրանսպորտային) մայրուղիներին կից որոշակի հողային տարածքներ,
* ոռոգման մայրուղիների (գետերի, ջրանցքների, ջրամբարների) որոշակի լայնեզր հողեր,
* զորամասերի կողմից ընդգրկվող, գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողեր և այն սպասարկող որոշակի հողատարածություններ,
* վերջապես, պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների համար նախատեսված հողեր: Նշենք, որ գյուղատնտեսական պետական ձեռնարկությունները, որոնք ՀՀ-ում չկան, քանի որ նույնիսկ պտղատնկային և տոհմաբուծական տնտեսությունները լուծարվեցին, սակայն ազատագրված շրջաններում դրանք պետք է նախատեսվեն:
* անտառային հողեր և անտառներ,
* կոլեկտիվ (կոոպերատիվ) գյուղատնտեսական ձեռնարկությունների համար նախատեսվող հողեր: ՀՀ-ում այդպիսիք նույնպես բացակայում են, լուծարվեցին սեփականաշնորհման ժամանակ: Լուծարվեցին, պետք է ասել, երբեմն չհիմնավորված: Հայաստանի 37 գյուղական շրջաններում գոյություն ունեին առնվազն 50 օրինակելի կոլտնտեսություն, որոնք կարող էին և պետք է պահպանվեին, և կլինեին մրցունակ մասնավոր շուկայական տնտեսությունների նորաստեղծ կացութաձևի պայմաններում, սակայն դաժանորեն լուծարվեցին, քանի որ ագրարային բարեփոխումների ՀՀՇ-ական հեղինակները հրապարակայնորեն հայտարարել էին «սոցիալիզմը արմատախիլ անելու» իրենց մտադրության մասին: Եվ արմատախիլ արեցին նույնիսկ օգտակար բույսերը՝ տեղ ազատելով թունավոր մոլախոտերի համար:

Համոզված ենք, որ այժմ նոր յուրացվող շրջաններում բոլոր նախադրյալները կան մրցունակ և օրինակելի կոլեկտիվ (կոոպերատիվ) գյուղձեռնարկություններ ստեղծելու համար: Այդ նախադրյալներից ամենակարևորը նորաբնակ ընտանիքներն են: Նրանք ամեն ինչ պետք է սկսեն զրոյից: Նրանք ոչ պակաս անզեն են, քան բուն Հայաստանի իրենց եղբայր գյուղացիները: Ով նրանց օգնի լուծելու գյուղատնտեսական զենքի, ասել է թե՝ գյուղատնտեսական մեքենայի և մեքենայացման հարցը, նա էլ կարող է խթանել կոլեկտիվ (կոոպերատիվ) գյուղատնտեսական ձեռնարկու-թյան կազմակերպման հարցը:

Գյուղացիների կամավոր միավորումը կոլեկտիվ (կոոպերատիվ) ձեռնարկության մեջ նրանց համար իսկական փրկօղակ է մանր-գաճաճ տնտեսության անլուծելի հոգսերից ազատվելու համար:

Կան մի քանի այլ օբյեկտիվ հանգամանքներ, ո-

որոնք թելադրում են կոլեկտիվ (կոոպերատիվ) գյուղացիական տնտեսությունների կազմակերպման անհրաժեշտությունը: Այդ հանգամանքներից մեկը Արցախի ագրարային բարեփոխումների դասերի ուսումնասիրությունն է: Չխորանալով այդ հարցի մեջ, նշենք ամենակարևորը.

Արցախում կոլեկտիվ պետական գյուղձեռնարկությունները բարեբախտաբար չեն լուծարվել, այլ պահպանվել են «բաժնետիրական ընկերությունների» ձևով: Դա նշանակում է՝ պահպանվել է խոշոր (կոլեկտիվ և պետական) գյուղձեռնարկությունների հետագա բարեփոխման և զարգացման հնարավորությունը, պահպանվել են դրանց հեռանկարային զարգացման այլընտրանքային տարբերակները: Այլ խոսքով, Արցախում կոլեկտիվ տնտեսությունները «արմատախիլ» չեն արվել:

**Մասնավոր հողօգտագործումից մասնավոր սեփականություն**

Բայց քանի որ հայերս ճնշող մեծամասնությամբ մասնավոր սեփականության և մենատնտեսության ընդգծված կողմնակիցներ ենք և այդ կատեգորիայի հազարամյա կրողը, ապա և ազատագրած շրջանների գյուղատնտեսական հողերի ճնշող մասը ակներևաբար կբաշխվի հենց այդ ուղղությամբ: Հատկապես գյուղատնտեսական հողատարածքները պետք է հատկացվեն նորաբնակներին մասնավոր հողօգտագործման համար: Ընդգծենք, մասնավոր հողօգտագործման, սակայն անմիջական ոչ մասնավոր սեփականության իրավունքով:

Հատկացնելով նորաբնակներին հողը անմիջապես որպես մասնավոր սեփականություն, մենք դրանով իրավունք ենք տալիս նրանց ցանկացած պահին իրենց հողը հանել առք ու վաճառքի, որը շուտով կարող է հանգեցնել սպեկուլյացիայի և դրա հետ կապված անառողջ երևույթների, ինչը անկայուն միջավայր կստեղծի նորաբնակների շրջանում:

Այդ իսկ պատճառով գյուղատնտեսական հողատարածքների հատկացումը նպատակահարմար է կատարել երկարատև (10-15 տարի) օգտագործման իրավունքով, ընդհուպ մինչև ժառանգական հողօգտագործման իրավունքը: Դա հնարավորություն կտա բնական ընտրության եղանակով առանձնացնել հողօգտագործողների այն կայուն, հավատարիմ խավը, որին, ի վերջո, հողը կամրացվի մասնավոր սեփականության իրավունքով:

Այսպիսով, ազատագրված շրջաններում մենք գործ ունենք օբյեկտիվորեն հողատիրության 3 ձևերի հետ, ընդ որում, եթե պետական և կոլեկտիվ համաձայնական հողատիրության կարգը կարող է սահմանվել պետական օրենքով կամ համայնքի կանոնադրությամբ, ապա շատ ավելի բարդ է մասնավոր հողատիրության խնդիրների լուծումը. զուտ ձևական իրական առումով մասնավոր հողատիրությունը կարող է հռչակվել օրենսդրական ակտով (ինչը և արվել է մինչև օրս), սակայն իրական-տնտեսական բովանդակության առումով՝ այս օրենքով հռչակել չես կարող, այլ պահանջում է շատ ավելի երկար ժամանակաշրջան, որի ընթացքում իրավական հողատերը կդառնա իրական տնտեսական շուկայական հարաբերությունների կրող, շուկայի ամենօրյա սուբյեկտը: Իրական հողատերը՝ իրական մասնավոր տնտեսության մասնակիցը, այսպես ասած, երկարատև երկունքի ծնունդ է: Շատ ավելի երկարատև, քան մեր նշած 10-15 տարին, ինչը միայն անցումային փորձնական շրջան է, որի ընթացքում անհատ հողօգտագործողը կամ վարձակալը թրծվում-կոփվում է որպես մասնավոր մենատնտես, մասնավոր սեփականատեր:

Քանի որ ազատագրված շրջանների յուրացումը առաջին քայլերն է կատարում և գյուղական համայնքներում այժմ նվազագույն թվով բնակչություն է հավաքվել, ապա և հասկանալի պատճառով յուրաքանչյուր համայնքի հողերի մեծ մասը (առնվազն 50 տոկոսը) պետք է հատկացվի անձեռնմխելի (պահուստային) ֆոնդին, ինչը կծառայի համայնքի հետագա զարգացման խնդիրների լուծմանը: Պահուստային ֆոնդի հողերը կարող են տրամադրվել կարճաժամկետ վարձակալության կարգով, մինչև նորաբնակների թվի ավելացումը:

**Մեքենա-տրակտորային հավաքակայանների ստեղծումը օրակարգի հարց**

*Գետազատը Արարատի մարզի Ուրց-Կոտայք գոտու վերին սահմանագծի գյուղերից մեկն է, չորս կողմը գետով ու ջրատարներով երիզված, հողերի բնական լանդշաֆտը տատանվում է չոր անապատայինից և կիսալեռնայինից մինչև ոռոգելի հարթավայրայինը: Բնակչությունը՝ շուրջ 550 ծուխ: Մոտակա ավտոմայրուղին և բենզալցակայանը մեկ կիլոմետրից հեռու են: Գյուղատնտեսական մշակելի հողատարածությունները 270 հա, որոնք տրոհված-բաժանված են շուրջ 1500 հողակտորների միջև:*

Այժմ պատկերացրեք ձեր աչքի առաջ 550 գյուղացու, տղամարդ կամ կին, զանազան տարողությամբ ամանները ձեռքին տարվա գրեթե բոլոր սեզոններին, ոտքով կամ էշով իջնում են դեպի վառելիքի վաճառքի կետ:

Այդ երթուղին կրկնվում է օրվա մեջ 5-10 անգամ: Վառելիք են ստանում տրակտորիստի և տրակտորի համար:

Թե՞ ինչ արժե հեղուկ վառելիքը՝ բոլորը գիտեն: Սակայն ոչ ոք չգիտի, քանզի ոչ ոք չի հաշվել, թե ինչ արժե այդ ժամանակը (չէ որ ժամանակը փող է): Առանց հաշվելու էլ կարելի է ասել, նկարագրված մարդկային ներուժի գիտակից օգտագործման պատկերը վաղ միջնադարյան պատկեր է: Իհարկե մեր համեմատությունը շատ պայմանական է՝ միջնադարում ոչ տրակտոր կար, ոչ հեղուկ վառելիք: Չկար աշխատուժի նման անխնա օգտագործում: Արդեն 18 տարի վառելիքավազքի այս տխուր պատկերը մեր գյուղից չի հեռանում և հայտնի էլ չէ երբ կհեռանա:

Այստեղ են ասել՝ «մինչև չգա նորը՝ չեն հիշի հինը»: Խորհրդային Հայաստանի խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունները (պետական, կոլեկտիվ, միջտնտեսային, պտղատնկարաններ, սերմնաբուծական և տոհմաբուծական) յուրաքանչյուրն ուներ իր սեփական մեքենա-տրակտորային կայանը, չհաշված յուրաքանչյուր վարչական շրջանի պետական կենտրոնացված մեքենա-տրակտորային հավաքակայանը: Այդ հավաքակայանները մեծ դրական դեր խաղացին մեր երկրի գյուղատնտեսության բոլոր ճյուղերի մեքենայացման, գյուղացու աշխատանքի թեթևացման գործում: Ինչ վերաբերում է կոլտնտեսություններին, մեքենա-տրակտորային հավաքակայանների և այսօր անհատ գյուղացիական տնտեսությունների համեմատական ծախսերին, ապա մեր ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գյուղացիական տնտեսության ծախսերը 1 հա վարելահողի կամ այգու մշակման համար 5-8 անգամ գերազանցում է կոլտնտեսության համանման ծախսերը[2]: Իսկ եթե այդ հաշվարկի մեջ մտցնենք նաև գյուղացու վազքը վառելիքի ճանապարհին, տարբերությունը ավելի ցայտուն կդառնա: Մեքենա-տրակտորային հավաքակայանների վերացումը ՀՀՇ-ական «հեղափոխական» առաջնորդների երկրորդ մահացու մեղքն էր, որն այսօր անուղղելի, անջնջելի է թվում: Սակայն վերստին հիշենք ժողովրդական խոսքն առ այն, որ վնասի կեսից ետ դառնալը դարձյալ օգուտ է: Վնասի կես ճանապարհից ետ կանգնելու դրական շանս է մեզ ներկայացել հենց ազատագրված շրջաններում և Արցախում, և առնվազն աններելի կլիներ այն չօգտագործել: Հայաստանի անցած 18 տարիների դրամատիկական ուղու դասերը միանշանակորեն հաստատում են գյուղատնտեսական մեքենա-տրակտորային հավաքակայանների վերականգնման կենսական անհրաժեշտությունը: Ֆինանսական միջոցները այդ նպատակով կարող են լինել ուղղակի անհատույց (անվերադարձ), փոխատվական (սուբսիդիաներ), վարկային ցածր տոկոսադրույքով և այլն: Ինչ վերաբերում է նման հավաքակայանների ստեղծման աշխարհագրությանը (որ համայնքում, շրջաններում և այլն), այդ հարցերի պատասխանը կտա իրավիճակի ուսումնասիրությունը տեղերում:

Չափազանց կարևոր հարցն այն է, թե ինչ սկզբունքով և ինչ պայմաններով պետք է կատարվի մեքենա-տրակտորային հավաքակայանների կողմից գյուղացիական տնտեսությունների սպասարկումը: Մի բան ակնհայտ է. գյուղացիական տնտեսությունների տեխնիկական սպասարկումը չի կարելի թողնել առանձին համայնքների հայեցողությանը, այլ պետք է կարգավորվի և վերահսկվի վերևից, կենտրոնացված կարգով: Անհատ գյուղացիական տնտեսության կամ նույնիսկ համայնական (կոլեկտիվ) տնտեսության սպասարկման նորմերը և սակագները պետք է ենթարկվեն կենտրոնացված պետական կամ հասարակական վերահսկողության, որպեսզի բացառվի առանձին մարդկանց և նույնիսկ առանձին կոլեկտիվների կողմից որևէ չարաշահում, գյուղացու շահերի որևէ ոտնահարում:

Մեքենա-տրակտորային հավաքակայանների վերականգնումը և շահագործումը այն դրական շանսն է, որ ներկայացել է Հայաստանին՝ ագրարային հարցի ասպարեզում թույլ տրված սխալները գոնե մասամբ շտկելու համար:

Վերջապես ազատագրված տարածքների ինքնապաշտպանության նկատառումները թելադրում են նոր գյուղական համայնքները ի սկզբանե կազմակերպելու ռազմականացված համայնքի (ավանի) սկզբունքով:

Այսպիսով, հողօգտագործումը ազատագրված շրջաններում կարող է լինել ինչպես անհատական–վարձակալական, այնպես էլ կոլեկտիվ-համայնական, ինչը հնարավորություն կտա խուսափել հողի համատարած սեփականաշնորհման այն ձախորդ փորձից, որը տեղի ունեցավ Հայաստանում 1990-ական թթ. սկզբին:

Ազատագրված շրջանների արագ տնտեսական յուրացումը անխուսափելիորեն կառաջացնի թուրք-ադրբեջանական քաղաքական քարոզարշավի նոր հիստերիա:

Դրան Հայաստանը պետք է նախապատրաստվի վաղօրոք և ձեռնարկի համարժեք քաղաքականություն և նոր հայեցակարգ, որի մշակումը մեր հասարակությունը պետք է նախապատրաստվի օր առաջ:

---

[2] Ն. Մանասերյան, «Ագրարային հարցը երեկ և այսօր», Երևան, 2005թ.:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1918 Թ.) ԲԱՔՎԻ ԷՊՈՊԵԱՆ

Լևոն Շիրինյան

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Ինքնին հասկանալի է, որ հայկական կողմը որևէ մեկնաբանությամբ չէր կարող համաձայնել Բաքվի գերմանա-թուրքական բռնազավթման հետ: Գերմանա-թուրքական բլոկի երկընտրանք բացառող դիրքորոշումը հայոց համար այլ տարբերակ չէր թողնում: Հինդենբուրգը թուրքական հորդաներին դիմադրող ազգային զորամիավորումներն անվանում էր «հայկական հրոսակախմբեր»: Նա գրում է. «Հայաստանում դեռևս մինչև ձմեռվա վերջը հարձակում է սկսվում այնտեղ գործող ռուսական բանակի դեմ: Ռուսական ուժը այստեղ խաբուսիկ էր: Թուրքերի արշավանքը դրա համար էլ դիմադրության հանդիպեց միայն հայկական հրոսակախմբերի մոտ» (Воспоминания Гинденбурга, էջ 103): Բնական է, որ, ինչպես վկայում է Ա. Գյուլխանդանյանը, «Բաքվի զորքերը կռիվը շարունակում էին այն խորը գիտակցությամբ, որ իրենց ամեն մի օրվա դիմադրությունը մի օրով երկարացնում է Հայաստանի գոյությունը» (Գյուլխանդանյան Ա., Բագուն Հայաստանի անկախության և նորա պահպանման տեսակետից, էջ 27): Ընդսմին, Բաքվի բոլշևիկների «սպեցիֆիկ» դիրքորոշումը, երբեմն, հակառակ Կենտրոնի և ընկ. Ստ. Շահումյանի կամքի, թույլ էր տալիս «միմյանց հետ գործակցելու Բաքվի մեջ եղած բոլոր տեսակի զինվորական և մարտական ուժերը, որոնք պատրաստություններ էին տեսնում օր առաջ շարժվելու Բաքվից (դեպի ճակատ.- Լ. Շ.)» (նույն տեղը, էջ 24):

Դժբախտությունն այն է, որ դաշնակիցներից միայն Անգլիան էր, որ քիչ թե շատ հետաքրքրություն ուներ Բաքվի և նրա նավթի հանդեպ, գերմանական արտահանման խափանման ու Բրիտանական կայսրության արևելյան տիրույթների անվտանգության խնդրով: Ուստի և Բեռլին-Բաքու-Բուխարա ռազմավարական առանցքը, բնականաբար, Անդրկովկասն ու Բաքուն դարձնում էին աշխարհամարտի ռազմագիտական հանգույցներից մեկը, իր բախտորոշությամբ, թերևս, երկրորդը՝ Մառնից և Փարիզի ուղղությունից հետո: Այս եզրահանգումը փաստվում է գեներալ Ձ. Դենստերվիլի պնդումով. «այդ իսկ պատճառով իմ վրա դրված պարտականության նպատակն էր, որ այդ շրջանում արգելք հանդիսանայի թուրքերի և գերմանացիների շարժումներին» (Տե՛ս Գյուլխան-



Հայ զինվորները Բաքվի կռիվներում, 1918 թ.

դանյան Ա., Բագուն Հայաստանի անկախության և նրա պահպանման տեսակետից, էջ 26):

Առկա է խնդրի մի այլ, ճիշտ է՝ ոչ այն կարևորության, ինչ Բաքուն էր, կողմը ևս, սակայն ռազմավարական իմաստով ոչ անտեսանելի հիմնահարցը. պարսկական ռազմաճակատի քայքայման հետևանքով մերկացել էր Բաղդադի անգլիական ռազմաճակատի աջ թևը՝ վտանգելով նրա կայունությունը: Ուստի և Բաղդադ-Բաքու ռազմագծի վերականգնումը՝ ապահովելու համար անգլիական զորքերի աջ թևը և Ատրպատականի հայության ու այնտեղ կուտակված հայության կյանքի ապահովման հրամայականը, տարածաշրջանում մերձեցնում էին հայ-անգլիական շահերը, սակայն դրանք չէին նույնանում: Ահա այստեղ է անգլիական զորքերի «առեղծվածային» վարքագծի գաղտնիքը Բաքու «ներխուժելիս» և նույնքան էլ «առեղծվածային» չքանալը այնտեղից: Եվ հավատարիմ իրենց անխախտ ավանդույթին, փորձում էին ուրիշի ձեռքով շագանակներ հանել կրակից՝ այս դեպքում համագործակցելով Պարսկաստանում տարբեր ցեղախմբերի հետ, իսկ Բաքվում և նրա շրջակայքում՝ հայկական ազգային զորամիավորումների հետ:

Եվ այսպես:

Հետամուտ թուրանական իդեալին [«մենք գալիս ենք Թուրքիայից՝ միացնելու մեզ հետ Ադրբեջանի թաթարին, սարթերին, աղվաններին և ստեղծելու մի նոր և մեծ պետություն, որից պիտի սարսի ամբողջ աշխարհը: Սա երազ չէ, այլ իրականություն»] և անսալով Մեծ եղբոր հորդոր-քարոզներին, թուրքերը հուլիսի վերջերին պաշարեցին Բաքուն, օգոստոսի սկզբներին՝ գրավեցին նավթահորերի մի մասը: «Ի վերջո,- գրում է Դ. Երգինը,- 1918 թվականի կեսերին (օգոստոսի 4-ին.- Լ. Շ.) Մեծ Բրիտանիան Պարսկաստանով այնտեղ ուղարկեց ոչ մեծ ուժեր: Նրա խնդիրն էր փրկել Բաքուն և պաշտպանել

նավթը: Անհրաժեշտության դեպքում նրանք պատրաստ էին (ռազմական նախարարության տվյալներով) կրկնել ռումինական սցենարը «և ոչնչացնել Բաքվի արդյունահանող գործարանը, խողովակաշարն ու նավթային ամբարները»: Մի ամսվա ընթացքում անգլիացիները մնացին Բաքվում և դա բավարար եղավ, որ նավթը չհասնի Գերմանիային: «Դա լուրջ հարված էր մեզ համար»՝ հարկադրված էր ասելու Լյուդենդորֆը: Սակայն, անգլիական զորքերը հեռացան[1] և թուրքերը վերցրին քաղաքը: Բայց այն ժամանակ, երբ թուրքական զորքերը վերցրին Բաքուն, Բաքվի նավթը այլևս չէր կարող փրկել Գերմանիային[2] (Ергин Д., Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть, էջ 200): «Անհաջողությունը Բաքվում լրջագույն հարված էր Գերմանիային: 1918 թ. հոկտեմբերին գերմանական բանակը սպառեց իր պաշարները» (նույն տեղը): Հիրավի, իրավացի էր լորդ Քերզոնը, երբ Լոնդոնում, Լանկաստերի տանը, պատերազմից 10 օր անց, նավթին նվիրված Դաշնակիցների կոնֆերանսում, հայտարարեց. «Դաշնակիցների գործը դեպի հաղթանակ լողաց նավթային ալիքի կատարով»:



Լյուդենդորֆ

Իսկ հարավկովկասյան ժողովուրդների քաղաքական ձգտումները ջրի երես դուրս եկան դեռևս Բաթումի «գործընթացում». «վրացիները միաժամանակ գաղտնի բանակցություններ վարելով գերմանացիների հետ Բաթումում՝ գեներալ ֆոն Լոսովի միջոցով և Բեռլինում գերմանական կառավարության հետ՝ ապահովել էին իրենց համար Գերմանիայի հովանավորությունը և Վրաստանի սահմանների անձեռնմխելիությունը թուրքական ներխուժման դեպքում» (Խատիսյան Ալ., Բաթումի դաշնագիրը, 1918 թ., 4 հունիսի.- «Մայիսի 28», Փարիզ, 1926, էջ 37): Բաթումում (1918 թ. մայիսի 25) վրացական սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխ Նոյ Ժորդանիան Ալ. Խատիսյանի այն հարցին, թե «Ազնվությո՞ւն է նպաստել Կովկասի կազմալուծման, երբ հայերը մենակ կռիվ են մղում ընդհանուր թշնամու դեմ», վրացի այս «քավոր» վրացական «վեհանձնությամբ» և բյուզանդական նենգությամբ, կարճ է կապում. «Ազնիվ է այն, ինչն օգտակար է իմ ժողովրդին» (նույն տեղը, էջ 39): Ուշադիր լինենք. «Անդրկովկասում ապրող ժողովուրդներից,- ընդհանրացնում է հայոց ազգային կռվի տաղանդավոր զորավարներից Ա. Գյուլխանդանյանը,- վրացիները, որ առաջ կռվում էին տաճիկների դեմ, մեծ ճարպկությամբ աստիճանաբար սկսեցին փոխել իրենց դիրքը և կռվող կողմից դարձան չեզոք կողմ՝ միաժամանակ ցույց տալով մեծ համակրանք և բարեկամություն դեպի Անդրկովկասի թաթարները» (Գյուլխանդանյան Ա., Բաքվի հերոսամարտը.-

[1] Դիվանագիտական խարդավանքներին քաջահմուտ անգլիացիները համաշխարհային հանրությանը մոլորության մեջ գցելու համար, իրենց ռազմավարական խնդիրը լուծած լինելուց հետո և իրենց «անփառունակ» «վարմունքը արդարացնելու համար,- գրում է Ա. Գյուլխանդանյանը,- վարկաբեկիչ լուրեր տարածեցին Բաքվի զորամասերի, գլխավորապես հայ զորքերի մասին» (Տե՛ս «Հայրենիք», 1941, հուլիս, էջ 91):

[2] Գերմանական բարձրագույն հրամանատարությունը «վառելանյութի տևական ճգնաժամին սպասում էր ձմռան գալստյան հետ: Հոկտեմբերին Բեռլինում հաշվում էին՝ պատերազմը ծովում կհաջողվի շարունակել միայն վեց-ութ ամիսների ընթացքում: Ռազմական արդյունաբերությունն իր բոլոր պաշարները կսպառի երկու ամսվա ընթացքում: Քսուքային նյութերի ընդհանուր կուտակումները կվերջանան վեց ամիս անց: Ցամաքում սահմանափակ գործողություններ հնարավոր են միայն մատակարարման խստագույն մասնաբաժանումով (рационированием), սակայն օդային և մեքենայացված ուժերը կլռեն (замрут) երկու ամիս անց:

Այս գնահատականների հավաստիությունը հնարավոր չեղավ ստուգել, քանի որ հյուծված Գերմանիան մեկ ամիս անց արդեն անձնատուր եղավ» (Ергин Д., Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть, էջ 200):



Բաքվի կռիվների զոհերը, 1918 թ.

«Հայրենիք», 1941, թիվ 11-12, էջ 84)։ Եվ անկախության տարիների հերոսական ու նույնքան ողբերգական տարիներին վրաց «թավադների» այս դասը թրքամետությունից ու թուրք-ադրբեջանցիների հանդեպ ծառայամտությունից այն կողմ չանցավ և որևէ այլ վարքագիծ չդրսևորեց, չհիշելով ոչ թմբկահարվող եվրոպականության և ոչ էլ, մասնավորապես, «ուղղափառ» քրիստոնեության մասին (Տե՛ս նաև Чалхушян Гр., Красная книга. Ростов на Дону, 1919, էջ 145-146, 162-171)։ Իսկ Ադրբեջանի էթնիկ թուրքերը պաշտոնական ու անպաշտոն բանակցություններով թուրքերին հրավիրում էին Անդրկովկաս և առաջարկում գրավել Ադրբեջանը։ Ուստի և «Հայերը մնում էին բառիս բուն նշանակությամբ մենակ՝ երես-երեսի թուրքերի հետ» (Խատիսյան Ալ., Բաթումի դաշնագիրը, էջ 38)։ Կամ՝ «Կովկասյան մահմեդականներն ակնհայտնի կերպով թուրքերի կողմն էին և համակրանքով էին նայում նրանց հաջողություններին և հառաջխաղացումին։ Վրացիները դժկամությամբ էին ընդունում պատերազմը և պատերազմական գործողություններից մի շաբաթ հետո արդեն տենչում էին հաշտություն։ Հայերը մնացել էին մենակ՝ շրջապատված թշնամիներով և հուսահատական ու անվեհեր կռիվ էին մղում թուրքերի դեմ» (նույն տեղը, էջ 36)։

Թուրքական դիրքորոշումը, իր հերթին, ցցուն կերպով դրսևորվեց մայիսի 22-ին, Բաթումում, այնտեղ ժամանած Ջեմալ փաշայի վարքագծում։ «Թաթարների հետ,- փոխանցում է օրվա մթնոլորտը Ալ. Խատիսյանը,- նա խոսեց շատ, սրտագին կերպով։ Վրացիների հետ՝ բավականին ջերմությամբ։ Հայերի հետ՝ շատ չոր ու պաղ» (նույն տեղը, էջ 381)։ Այս իրականության մեջ, բնականաբար, հայ զինվորին մնում էր ռազմի դաշտում ցույց տալ իր «ուժն ու տոկունությունը»։ Եվ նա, հիրավի, ցույց տվեց իր «ուժն ու տոկունությունը» ոչ միայն Երզնկայից մինչև Բաքու, այլև Բաքվի անկումից հետո՝ մինչև նոյեմբերի 7, Մուդրոսի զինադադարից 7 օր անց Պետրովսկի (Մախաչկալա.- Լ. Շ.) տակ, երբ հայ-թուրքական սրերը նորից խաչաձևվեցին, երբ թուրքական զորքերը Բաքվի անվտանգությունն ապահովելու և Հյուսիսային

Կովկասը նվաճելու համար փորձեցին միանալ Կովկասի լեռնականներին...

...Որպես ուղիղ հետևանք Բրեստ-Լիտովսկի դավաճանության, Բաթումի խորհրդաժողովում, համաձայն գեներալ ֆոն Լոսովի Բեռլին ուղարկած զեկուցագրի, «թուրքական հայացքներն ուղղվեցին դեպի Բաքու և Վլադիկավկազ, ամբողջ Կովկասի նվաճում» (Muhlmann C., Das Deutsch Turkische Waffenbundnis, էջ 199)։

Հայ զինվորի «ուժն ու տոկունությունն» էլ հենց թաղեց թուրանական այս մղումը։

Դաժան ու անզիջում կռվի ընդհանուր մթնոլորտը այսպես է ներկայացնում ականատես-մասնակիցը. թշնամին «նորանոր թարմ ուժեր էր ստանում թե՛ շրջակա հարյուր հազարավոր թաթար ազգաբնակչությունից և թե Գալիպոլիից, որի զորամասերն անդադար թափվում էին Բաքվի պատերի տակ՝ վերջնականապես ջախջախելու համար հայերի դիմադրությունը և խլելու այն նավթի քաղաքը, որը մեծ և ճակատագրական դեր էր կատարում ընդհանուր պատերազմի բախտի վրա» (Գյուլխանդանյան Ա., Օգոստոսի հինգը. մի էջ Բաքվի հերոսամարտից.- «Վէմ», 1933, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 116)։ Կամ՝ «Կես գիշեր էր (հուլիսի 30.- Լ. Շ.)։ Բոլորը, սվինները ձեռներին, իրենց դիրքում են և, կարծես, զգում են, որ մոտենում է վճռական ժամը։ Դիմացը կանգնած է թշնամու խառն հազարանոց բանակը, սուլթանական գվարդիան, Գալիպոլիում 200 հազար անգլիացիների դեմ հաղթություն տարած դիվիզիաները, գլխավորությամբ Նուրի փաշայի և գերմանական ու տաճկական ականավոր զորավարների ու սպաների» (Մելիք-Յոլչյան Ս., Բաքվի հերոսամարտը.- «Հայրենիք», 1925, հուլիս, էջ 71)։

Մի դրվագ էլ Բաքվի «հայկական էպոպեայից»՝ օգոստոսի 4-ի Սալյանի զորանոցների մոտ տեղի ունեցած մարտից և պատմության մեջ հազվագյուտ հանդիպող զինվորի դյուցազնական նկարագրից, մարմնացումը անցյալի առասպելական (հայ) կերպարների. «Ռումբերը պայթում են մերոնց գլխին, փչացնում են թնդանոթները, սպանում և վիրավորում մեր ուսանողներից (թնդանոթաձիգ.- Լ. Շ.) շատերին, որոնց թվում և Ռուբեն Շաթիրյանին - քառասուն և երկու տեղից... (Դյուցազնակերտ այս հայորդին) «մի տարի բժշկվելուց հետո և կորցնելով մի ոտքը, մի աչքը, ծնոտի մի մասը, անցավ Հայաստան և շարունակեց զինվորական ծառայությունը Հայաստանի զորամասերում» (Նույն տեղը, էջ 74)։

Բաքվի «հայկական էպոպեան» ջրի երես հանեց մարտական մաների (հայկական) արվեստը։ Մինչ ՀՀ-ն Բաթումի դաշնագրի հարկադրանքով ստիպված էր հրաժարվելու զինված պայքարը շարունակելու գայթակղությունից, արցախահայությունն իր վրա վերցրեց ազգային պայքարի ծանրությունն ու պատերազմը շարունակելու առաքելությունը, դրանով իսկ կաշկանդելով դեպի Բաքու արշավող թուրք-գերմանական բանակների առաջխաղացումը։ Ճշմարիտ հայը և քաղաքացի զինվորականը՝ Յու. Բարսեղովը գրում է. «Հիմնական ուժը նետելով հայերի դեմ, Թուրքիան կրեց ընդհանուր պարտությունն առաջին աշխարհամարտում, երբ թվում է, գրավելով Բաքուն, արդեն հասել էր իր նպատակին» (Барсегов Ю. Г., Геноцид армян. В 2-х т. М., 2005, т. 2, ч. 2, էջ 216)։ Գերմանացու ճշգրտությամբ և բարեխղճությամբ է արտահայտվում Պաուլ ֆոն Հինդենբուրգը. «Հայաստանի դեմ ավերիչ պատերազմի հետևանքներից մեկը պատերազմի ժամանակ թուրքական զորքերի զանգվածային ոչնչացումն էր՝ կովկասի լեռներում հյուծումից» (Воспоминания Гинденбурга, էջ 32)։ Հետագայում, հերթական թուրք գեներալ Ալի Իհսան փաշան պետք է խոստովաներ. «Եթե չլինեին հայերը, մենք կգրավեինք Կովկասը» (Տե՛ս Atamian S., The Armenian Community. The historical development of a social and ideological conflict. N. Y., 1955, էջ 199)։

Եթե...



Թուրք սպաներ, 1918 թ.

A.R.F. BURO



# Նախիջևան. թուրք-ադրբեջանական հակասությունների շուրջ

*Կարեն Վերանյան*

Վերջին շրջանում Հարավային Կովկասում մի շարք առանցքային հիմնահարցերի շուրջ ընթացող զարգացումները և դրանց չափից ավելի շահարկումները ետին պլան են մղել տարածաշրջանի այնպիսի ոչ պակաս կարևոր խնդիրներ, որոնց շարքին պետք է դասել Նախիջևանի ինքնավարությունում ընթացող զարգացումները և դրանցում այլ արտաքին ուժերի և առաջին հերթին Թուրքիայի ներգրավվածության հարցերը: Փաստերը ցույց են տալիս, որ հատկապես վերջին տասնամյակում թուրքական կողմը կարողացել է ապահովել իր քաղաքական ու տնտեսական ներկայացվածությունը Նախիջևանի ինքնավարությունում, հարցեր, որոնք իսկապես պետք է որ լուրջ մտահոգության տեղիք տան Բաքվի իշխանություններին: Ինքնավարությունում թուրքական գործոնի ակտիվացման հարցում Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների բավական զուսպ կեցվածքը թերևս պայմանավորված է նախ Թուրքիայի հետ եղբայրական հարաբերությունների չխախտման, և երկրորդ՝ խնդրի շուրջ թուրք-ադրբեջանական հակասությունները չշահարկելու պարզ տրամաբանությամբ: Նախիջևանի ինքնավարության շուրջ Ադրբեջանի ու Թուրքիայի միջև առկա տարաձայնությունները, որոնք ըստ էության, կրում են սկզբունքային բնույթ, կարելի է դասակարգել մի քանի հիմնական ուղղությունների:

### Ժողովրդագրական խնդիրներ

Ադրբեջանի ազգային անվտանգությանը սպառնացող լրջագույն խնդիրներից մեկը վերաբերում է Նախիջևանի ինքնավարության ժողովրդագրության ներկայիս վատթար իրադրությանը: Չունե-



Նախիջևան

նալով ցամաքային սահման Ադրբեջանի հանրապետության հետ և ստանալով անկլավային կարգավիճակ՝ Նախիջևանի ինքնավարության սոցիալ-տնտեսական պայմանները հայտնվել են բավական անմխիթար վիճակում, ինչի հետևանքով տեղի բնակչության մի զգալի հատված գերադասում է վերաբնակվել առաջին հերթին սահմանակից Թուրքիայում (Իգդիր և Ստամբուլ), Ադրբեջանում և այլ երկրներում: Ոչ պաշտոնական տվյալների համաձայն, սոցիալական անբարենպաստ պայմանների, համատարած գործազրկության հետևանքով ինքնավարության բնակչության թվաքանակը ավելի քան կիսով չափ կրճատվել է: 1999 թ. բնակչության վերջին մարդահամարի տվյալների համաձայն, ինքնավարությունում բնակվում էր շուրջ 370 հազար մարդ, իսկ ներկայումս նրանց թվաքանակը չի գերազանցում 150 հազարը:

Ադրբեջանի կենտրոնական իշխանությունները ամեն կերպ փորձում են տեղական ու արտասահմանյան ներդրողների միջոցով աշխուժություն մտցնել ինքնավարության տնտեսությունում, սակայն այդ ջանքերը, որպես կանոն, մեղմ ասած, բավարար չեն Նախիջևանի տնտեսության զարգացման համար: Խնդիրը դառնում է է՛լ ավելի մտահոգիչ Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների համար, երբ առաջ է գալիս մեկ այլ օրակարգային խնդիր՝ ինքնավարության ժողովրդագրության վերափոխման միտումը: Բազմիցս է խոսվել վերջին շրջանում Թուրքիայի արևելյան շրջանների բնակչության շրջանում, որի ճնշող մեծամասնությունը ազգությամբ քրդեր են, կանոնավոր դարձած ներհոսքը Նախիջևանի ինքնավարություն: Թուրքիայի սոցիալ-տնտեսական բավական վատ վիճակում հայտնված արևելյան




շրջաններից գաղթած նորաբնակները համեմատաբար հեշտ են ինտեգրվում ինքնավարության սոցիալական պայմաններին ու հասարակական կյանքին: Ավելին, նրանց մի զգալի հատված կարողանում է կարճ ժամանակահատվածում նույնիսկ ձեռք բերել անշարժ գույք, ինչը դարձել է բավական կանոնավոր երևույթ: Խնդրի առնչությամբ իրենց մտահոգությունն են հայտնել նաև Ադրբեջանի փորձագետները, որոնք Նախիջևանի ժողովրդագրության աստիճանական վերափոխման միտումը պայմանավորում են Թուրքիայի հատուկ քաղաքականության հետ, ինչի արդյունքում ոչ հեռու ժամանակներում Նախիջևանը կհայտնվի քրդացման վտանգի շեմին:

Հիմնականում կենտրոնանալով ինքնավարության քրդացման երևույթի շուրջ՝ մամուլում ընդհանրապես չի խոսվում Նախիջևանի ինքնավարության այն բնակիչների վերաբերյալ, որոնք արտագաղթել են սահմանակից Թուրքիա և որպես կանոն հաստատվել Իգդիր ու Ստամբուլ քաղաքներում: Խնդիրը նրանում է, որ թուրքական կողմը լուրջ աշխատանքներ է ծավալում արտագաղթած ադրբեջանական համայնքի հետ, փորձում օգտագործել նրանց ներկայությունը ինքնավարությունում թուրքական գործոնի ակտիվացման ուղղությամբ: Պաշտոնական Անկարան մի կողմից աջակցում է նորաբնակ ադրբեջանցիների՝ համեմատաբար առանց խոչընդոտների ինտեգրմանը տեղի սոցիալական ու հասարակական կյանքում, մյուս կողմից՝ ամեն կերպ նպաստում ինքնավարությունում մնացած իրենց ազգականների հետ շփումների պահպանման գործընթացին:

### Կլանային պայքար

Նախիջևանի ինքնավարության հետ ցամաքային սահմանի բացակայությունը հատկապես վերջին տասնամյակում զգալիորեն թուլացրել է Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների վերահսկողությունը ինքնավարության ներքին ու արտաքին գործընթացների վրա:

Սակայն ոչ միայն. այսօր գրեթե չի խոսվում Նախիջևանի ինքնավարության ղեկավարության՝ կենտրոնական իշխանությունների հետ ունեցած հակասությունների մասին: Անկլավային կարգավիճակում հայտնված ինքնավարությունում ստեղծված են գրեթե բոլոր պայմանները ավտորիտար կամ բռնատիրական կարգերի հաստատման համար, ինչին ականատես ենք այսօր: Ինչպես նշում են ինքնավարության բնակիչները, ամենուրեք ոտնահարվում են մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները, սակայն վերջիններս տեղական ղեկավարության ճնշումների ներքո որևէ հնարավորություն չունեն այդ մասին տեղեկացնելու Ադրբեջանի կենտրոնական իշխանություններին կամ եվրոպական համապատասխան ատյաններին: Քիչ չեն այն դեպքերը, երբ ինքնավարության տեղական ղեկավարության ընդդիմախոսները, որոնք անթաքույց հայտնել են իրենց վրդովմունքը ինքնավարությունում հաստատված բռնատիրության, տիրող համատարած անարդարության ու անպատժելիության մթնոլորտի վերաբերյալ, ծերբակալվել են Հայաստանի օգտին կատարած լրտեսության մեղադրանքներով:



Հայկական խաչքարերը Ջուլֆայում

Ցամաքային սահմանի բացակայության հանգամանքներում ինքնավարության վերնախավի նկատմամբ կենտրոնական իշխանությունների ազդեցության թուլացման արդյունքում խորացել են կենտրոնի ու շրջանի միջև առկա ներկլանային տարաձայնությունները: Հայտնի է, որ Ադրբեջանի կենտրոնական ղեկավարությունը՝ ի դեմս Ալիևների ընտանիքի, նույնպես ծնունդով սերում է Նախիջևանից և բավական լուրջ ներիշխանական տարաձայնություններ ունի ինքնավարության իշխանական կլանի հետ: Վերջինիս նկատմամբ վերահսկողության ու ազդեցության պահպանման նպատակով երկրի կենտրոնական իշխանությունները փորձել են ակտիվացնել ինքնավարության տեղական ղեկավարության ընդդիմադիր թևը, սակայն որպես կանոն, լուրջ հաջողությունների չեն հասել տեղական ղեկավարության բանեցրած ներքաղաքական ճնշումների ու ինքնավարությունում տիրող անպատժելիության մթնոլորտի պայմաններում: Կենտրոնի հետ ինքնավարության տեղական վերնախավի հարաբերությունների բարելավմանը զգալիորեն խոչընդոտում է նաև վերջինիս մոտ ձևավորված «անկլավային» կամ այսպես կոչված մեկուսացված գոյակցման հոգեբանությունը կամ բարդույթը:

Ինքնավարության ղեկավարության ուղղությամբ Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների ճնշումների ու ազդեցության թուլացման

միջոցներից մեկն էլ սահմանակից Թուրքիայի հետ հարաբերությունների սերտացումն է, ինչը զգալիորեն խորացել է հատկապես վերջին մի քանի տարիների կտրվածքով: Արդյունքում Ադրբեջանի կենտրոնական իշխանությունները սկսել են առավել զգուշավորություն ցուցաբերել ինքնավարության վերնախավի նկատմամբ ճնշումների բանեցման քաղաքականության հարցում, ինչն իր հերթին է աստիճանաբար նպաստել ինքնավարության վերնախավի նկատմամբ կենտրոնական ղեկավարության վերահսկողության թուլացմանը:

Նախիջևանի ինքնավարության ու Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների միջև առկա հակասությունները լավ առիթ են թուրքական կողմի համար ինքնավարության ներքին խնդիրներում իր ներկայացվածության ընդլայնման համար: Վերջին տարիներին պաշտոնական Անկարան զգալիորեն ակտիվացրել է համագործակցությունը ինքնավարության ղեկավարության հետ, ինչի կապակցությամբ Ադրբեջանի կենտրոնական իշխանությունները մեկ անգամ չեն հայտնել իրենց անթաքույց վերաբերմունքը: Մյուս կողմից, սակայն, պաշտոնական Անկարայում բավական ջերմ են ընդունում ինքնավարության հակաիշխանական ներկայացուցիչներին ու շարքային քաղաքացիներին: Չպետք է մոռանալ, որ ինքնավարության վերնախավի ընդդիմախոսները տեղի վերնախավի ճնշումների ներքո ստիպված են երկրում տիրող կամայականությունների ու բարձիթողի վիճակի մասին իրենց դժգոհությունները հայտնել թուրքական կողմի միջամտությամբ ու աջակցությամբ:

### Տնտեսական գործոն

Նախիջևանի ինքնավարության ու Թուրքիայի միջև համագործակցությանը զգալիորեն նպաստում է ինքնավարության սոցիալ-տնտեսական անմխիթար իրադրությունը: Ադրբեջանի հետ ցամաքային սահմանի բացակայությունը զգալիորեն դժվարացնում ու ֆինանսապես ոչ շահավետ է դարձնում կենտրոն-շրջան հեռահաղորդակցության և ապրանքափոխադրումների հիմնահարցը, որոնք հիմնականում իրականացվում են Իրանի տարածքով: Տեխնիկապես ու ֆինանսապես առավել շահավետ է ինքնավարության տնտեսական համագործակցությունը սահմանակից Թուրքիայի հետ, ինչը հանգեցրել է և այդ երկրից Նախիջևանի տնտեսության կախվածությանը: Նախիջևան առաքվող էլեկտրաէներգիայի մատակարարումների հիմնական մասը իրականացվում է ի հաշիվ Թուրքիայի, ոչ մեծ տոկոս էլ՝ հարևան Իրանից:

Ինքնավարության ու Թուրքիայի միջև տնտեսական, ինչպես և քաղաքական հարաբերությունների խորացման հարցում կարևոր նախադրյալներից մեկն էլ սահմանակից Իրանի գործոնն է: Խնդիրը նրանում է, որ իրանական կողմը, հաշվի առնելով Իրանի ադրբեջանցիների գործոնը և խուսափելով հարցի ակտուալացումից, բավական զգուշավորությամբ է մոտենում Նախիջևանի ադրբեջանցիների ցանկացած ակտիվացման դրսևորումներին և տարածաշրջանում Նախիջևանի ինքնավարության քաղաքական կամ տնտեսական կշռի մեծացման խնդիրներին: Ուստի տրամաբանական է, որ իրանական կողմը, ըստ էության, ամենևին էլ շահագրգռված չէ ինքնավարության տնտեսական կացության զարգացման գործում: Փաստորեն, Ադրբեջանի հետ ցամաքային սահմանի բացակայությունը, սահմանակից Իրանի հետ, մեղմ ասած, ոչ այնքան բարիդրացիական հարաբերությունները և սահմանակից մյուս երկրի՝ Հայաստանի հետ հարաբերությունների իսպառ բացակայությունը Թուրքիայի հետ համագործակցությունը վեր են ածել այլընտրանքային շահավետ ուղու: Ի տարբերություն Իրանի, Թուրքիան շարունակում է կարևոր դերակատարում ունենալ Նախիջևանի ինքնավարության տնտեսության զարգացման գործում: Թուրքական կապիտալն այսօր հաստատուն դիրքեր է ձեռք բերել ինքնավարության տնտեսության այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տրանսպորտը, սպասարկման ծառայությունները, շինարարությունն ու զբոսաշրջությունը:

Թուրքական կողմը փոր-

ծում է ակտիվորեն ներգրավվել նաև ինքնավարության կրթական համակարգում և առավել սերտորեն համագործակցում է Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի Նախիջևանի մասնաճյուղի, ակադեմիայի շրջանակներում գործող Ազգագրության ու հնագիտության ինստիտուտի, Նախիջևանի պետական համալսարանի, 1999 թ. հիմնադրված Նախիջևանի մասնավոր համալսարանի (Nakhchivan Private University), ինչպես նաև 1993 թ. հիմնադրված Հեյդար Ալիևի անվան ռազմական ուսումնարանի հետ:



Նախիջևան-Իրան սահման

**Հետևություններ**

Նախիջևանի հիմնահարցը շարունակում է մնալ Ադրբեջանի ու Թուրքիայի միջև շարունակվող եղբայրական հարաբերությունների թերևս ամենահակասական հիմնախնդիրներից մեկը: Խորհրդային կարգերի փլուզումից հետո թե՛ թուրքական և թե՛ ադրբեջանական կողմերը Նախիջևանի հիմնահարցում միմյանցից ակնկալիքներ ու զիջումներ կորզելու նպատակով շահարկել են հայկական գործոնը: Ադրբեջանական կողմի իրականացրած անփառունակ փորձերից մեկն էլ վերաբերում էր Մեղրիի շրջանով Նախիջևանի հետ ցամաքային սահմանի հաստատման՝ պաշտոնական Բաքվի շահարկումներին, ինչի հարցում իրականում թուրքական կողմը բավական բացասաբար դիրքորոշում ուներ՝ պայմանավորված Նախիջևանում թուրքական ազդեցության հնարավոր թուլացման խնդրով: Թուրքիան իր հերթին է ամեն առիթով շահարկել հայ-ադրբեջանական հակասություններն ու ղարաբաղյան հիմնախնդիրը՝ այդ թվում և Նախիջևանի ինքնավարությունում ընթացող զարգացումներից Ադրբեջանի կենտրոնական իշխանություններին դուրս մղելու և այլ գործընթացների ուղղությամբ շեղելու նպատակներով: Արդյունքում այսօր կարելի է հաստատել, որ Նախիջևանի ինքնավարությունը շարունակում է մնալ «տեղեկատվական վակուումում», ինչը թույլ է տալիս թուրքական կողմին առավել ազատ գործել այս ուղղությամբ:

Նախիջևանի ինքնավարության հետագա ճակատագրի շուրջ խոսակցությունները կրկին ակտիվացել են մասնավորապես վերջին շրջանում՝ պայմանավորված հայ-թուրքական հարաբերությունների բարելավման գործընթացի հետ: Ադրբեջանի ղեկավարությունը հստակ գիտակցում է, որ հայ-թուրքական սահմանի հնարավոր վերաբացումը նախ կխորացնի Ադրբեջանի հանրապետության ու Նախիջևանի ինքնավարության միջև գոյացած անջրպետը՝ է՛լ ավելի թուլացնելով կենտրոնական իշխանությունների վերահսկողությունն ու ներգրավվածությունը ինքնավարության ներքին զարգացումներին: Եվ երկրորդ, որն ամենակարևորն է, հայ-թուրքական սահմանի վերաբացմամբ Թուրքիայի կողմից կարծեք թե կամրապնդվի ինքնավարության «գոտիավորման» գործընթացը և արդյունքում կմեծանա թուրքական կողմի ազդեցությունը ներքին ու արտաքին խնդիրներում:

# Թուրքիան աշխարհաքաղաքական շահերի խաչմերուկում

Կ. ՎԱՌՈՒՇԱՆՅԱՆ

## Նախաբանի փոխարեն

**2008** թ. օգոստոսյան վրաց-ռուսական պատերազմը զգալի ազդեցություն ունեցավ հարավկովկասյան ընթացիկ ռազմաքաղաքական զարգացումների վրա: Ավելին, հարավօսական իրադարձությունները մեծապես պայմանավորեցին տարածաշրջանային հետագա գործընթացների ընդհանուր տրամաբանությունն ու դրանց զարգացման հեռանկարները: Մյուս կողմից, հարավօսական իրադարձությունները, որոնք ուղղակի հետևանք էին միջազգային ռազմաքաղաքական հարթակում խորացող լարվածության պոռթկման և մասնավորաբար ԱՄՆ-Ռուսաստան, ՆԱՏՕ-Ռուսաստան շահերի բացահայտ առճակատման, իրենց հետևանքներով շարունակում են ներկայանալ միջազգային հարաբերությունների կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Դժվար է չհամաձայնել, որ Հարավային Կովկասում ընթացող զարգացումներն ու դրանց հեռանկարները կշարունակեն պայմանավորվել օգոստոսյան դեպքերից հետո տարածաշրջանում ձևավորված նոր status-quo-ով:

Հարավկովկասյան վերջին զարգացումների էական առանձնահատկություններից մեկն էլ վերաբերում է տարածաշրջանային երկու տերությունների՝ Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերություններին, ինչպես նաև նրանց ներգրավվածությանը տարածաշրջանային զարգացումներում: Միանշանակ է, որ հարավօսական իրադարձությունները նաև պայմանավորեցին տարածաշրջանային այդ տերությունների ու հարավկովկասյան հանրապետությունների միջև փոխհարաբերություններն ու դրանց զարգացման հիմնական տեսլականները: Վերլուծաբանների մի զգալի հատված հակված է այն տեսակետին, թե վրաց-ռուսական հնգօրյա պատերազմով մեր տարածաշրջանում, ի հաշիվ ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի ազդեցության որոշակի թուլացման, զգալիորեն ընդլայնվեցին հատկապես Ռուսաստանի դիրքերը: Իհարկե, դժվար է հերքել այն, որ վերջին շրջանում էապես ընդլայնվել է Կրեմլի ազդեցությունն ու կշիռը ինչպես գլոբալ ռազմաքաղաքական, այնպես էլ էներգետիկ հարաբերություններում, ինչը նաև պետք է պայմանավորել հարավօսական իրադարձություններում ռուսական կողմի տարած հաղթանակով: Սակայն այսօր թերևս քչերն են կիսում կարծիքն առ այն, որ վրաց-ռուսական պատերազմով տարածաշրջանում և միջազգային հարաբերություններում առհասարակ, ըստ էության, մեծացան ոչ այնքան Ռուսաստանի, որքան նախ և առաջ հարևան Թուրքիայի դիրքերը: Սույն հոդվածում կծավալվենք գերազանցապես տարածաշրջանում թուրքական գործոնի ակտիվացման հարցերի ու դրա ռեսուրսների և զարգացման հեռանկարների շուրջ՝ փորձելով հնարավորինս հստակ հիմնավորումներ տալ մեր կողմից վերևում առաջադրված տեսակետին:



**Թուրքական գործոնը միջազգային հարաբերություններում**

Այսօր Թուրքիան ակտիվորեն ներգրավված է միջազգային հարաբերությունների մի քանի հիմնական ռազմավարական, քաղաքական ուղղություններում կամ վեկտորներում, որոնք հանդիսանում են պաշտոնական Անկարայի ռազմավարական գերակայությունները. դրանք են՝

* Թուրքիա-Միացյալ Նահանգներ համագործակցության խորացում,
* Համագործակցության ամրապնդում Հյուսիսատլանտյան դաշինքի հետ,
* ԵՄ Թուրքիայի անդամակցություն,
* Թուրքիա-իսլամադավան աշխարհի համագործակցության ընդլայնում:

*1. Համագործակցության խորացում Միացյալ Նահանգների հետ*

2008 թ. հնգօրյա պատերազմի հետևանքով Հարավային Կովկասում Միացյալ Նահանգների ազդեցության որոշակի թուլացումը նոր ակտիվություն հաղորդեց ԱՄՆ-Թուրքիա ռազմավարական համագործակցության խորացմանը: ԱՄՆ-ի գործող նախագահ Բ. Օբամայի վարչակազմի՝ Ռուսաստանի հետ առկա հակասությունների հաղթահարման և երկկողմ համագործակցության ընդլայնման ռազմավարությունը որոշակիորեն պայմանավորեց Վաշինգտոնի որակապես նոր մոտեցումները՝ Հարավային Կովկասում ամերիկյան ռազմաքաղաքական ազդեցության խորացման հարցերում: Արդյունքում ստեղծվում է բավական իրատեսական տպավորություն առ այն, որ մեր տարածաշրջանում ԱՄՆ-ի քաղաքական, ինչու չէ՝ նաև ռազմաքաղաքական ներգրավվածությունն ընդունում է ավելի շուտ անուղղակի-միջնորդավորված կամ ասոցիացված բնույթ: Փորձելով գալ երկխոսության հաստատման Ռուսաստանի հետ և խուսափելով վերջինիս հասցեագրված ավելորդ տարաձայնություններ հրահրելուց՝ Օբամայի վարչակազմը այսօր որոշակի վերապահումներով է մոտենում Հարավային Կովկասում ամերիկյան ուղղակի ազդեցության խորացման հիմնահարցին և մեծ հույսեր կապում




| Country | Military Active | 2007 Population | 2007 GDP (billions) |
|---|---|---|---|
| Russia | 1,037,000 | 141,000,000 | $1,220 |
| Iran | 745,000 | 71,000,000 | $275 |
| EU | 1,950,000 | 495,000,000 | $16,500 |
| Syria | 296,000 | 19,000,000 | $37 |
| Ukraine | 361,000 | 46,000,000 | $130 |
| Iraq | 355,000 | 27,000,000 | $61 |
| Israel | 168,000 | 7,000,000 | $155 |
| Serbia | 31,000 | 8,000,000 | $40 |
| Turkey | 515,000 | 74,000,000 | $515 |

այս ուղղությամբ առաջին հերթին Վաշինգտոն-Անկարա տանդեմի առաջմղման հետ:

Թե՛ ամերիկյան և թե՛ թուրքական կողմը շահագրգռված են խորացնել երկկողմ համագործակցությունը նաև էներգետիկ ոլորտում: Ի հակակշիռ պաշտոնական Մոսկվայի, ԱՄՆ-ի վարչակազմում մեծապես կարևորում են միջազգային էներգետիկ անվտանգության համակարգում և էներգակիրների մատակարարման ու դրանց ուղիների դիվերսիֆիկացման հիմնահարցում Թուրքիայի առանցքային նշանակությունը:

Արդյունքում կարելի է համաձայնել, որ Վաշինգտոն-Մոսկվա հարաբերությունների կարգավորման այս գործընթացը բավական լուրջ հնարավորություններ ու ռեսուրսներ կարող է ընձեռել մասնավորաբար թուրքական կողմին ինչպես միջազգային հարաբերություններում, այնպես էլ Հարավային Կովկասում Թուրքիայի դերի ու կշռի մեծացման համար, ինչին և մենք ականատես ենք լինում՝ դատելով տարածաշրջանում վերջին երկու տարիներին տեղի ունեցող զարգացումներից: Տեղին է հիշատակել ս. թ. ապրիլին ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Բ. Օբամայի կողմից իրականացված բավական խորհրդանշական այցելությունը Թուրքիա, որը կոչված էր ի ցույց դնել միջազգային հանրությանը ամերիկյան տեսլականում Թուրքիայի աշխարհառազմավարական զգալի կարևորությունը: Վաշինգտոնում մեծ հույսեր են կապում պաշտոնական Անկարայի հետ՝ վերջինիս՝ որպես Արևելքի ու Արևմուտքի միջև կարևոր կամուրջ հանդիսանալու հարցում:

*2. Թուրքիա-ՆԱՏՕ համագործակցության ամրապնդում*

ՆԱՏՕ-Ռուսաստան երկխոսության վերականգնման գործընթացին զուգահեռ և հատկապես Դաշինքի նորընտիր գլխավոր քարտուղար, Դանիայի նախկին վարչապետ Ռասմուսենի նշանակմամբ Դաշինքում առանձնահատուկ կարևորություն սկսեց տրվել համագործակցության խորացմանը կազմակերպությանն անդամակցող Թուրքիայի հետ: Կողմերի միջև վերջին շրջանում ակտիվացած շփումներում առանցքային թեմաներից մեկը վերաբերում է միջազգային հարաբերություններում Թուրքիայի դերակատարման բարձրացման անհրաժեշտության հարցերին: Պատահական չէր, որ նշանակումից հետո Դաշինքի գլխավոր քարտուղարի կատարած առաջին այցերից մեկն իրականացվեց դեպի Թուրքիա: Նրա հավաստիացմամբ, ՆԱՏՕ-ի ռազմավարական նոր հայեցակարգում, որպես գերակայություն, առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու Թուրքիայի հետ համագործակցության խորացման հեռանկարներին: Ավելին, Ռասմուսենը թուրք ղեկավարությանը խոստացել է իր տեղակալներից մեկի պաշտոնում առաջադրել Թուրքիայի ներկայացուցչին:

Դաշինքում Թուրքիայի հետ համագործակցության խորացումը (Թուրքիան բարիդրացիական սերտ հարաբերություններ ունի ինչպես Աֆղանստանի, այնպես էլ Պակիստանի իշխանությունների հետ), այսօր մեծապես պայմանավորված են Աֆղանստանում ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի կրած վերջին անհաջողություններով: Ավելին, ս. թ. օգոստոսից Աֆղանստանում Անվտանգության աջակցման միջազգային ուժերի (ԱԱՄՈՒ) հրամանատարությունը հերթափոխից հետո ստանձնեց թուրքական կողմը: Դաշինքում չեն թաքցնում Աֆղանստանում ԱԱՄՈՒ-ի հումանիտար առաքելությունում պաշտոնական Անկարայի ունեցած մեծ ավանդի կարևորությունը, զգալի նշանակություն է տրվում երկրի անվտանգության մարմինների վերապատրաստման գործում թուրք մասնագետների ակտիվ ներգրավման հարցերին:



Մյուս կողմից, սակայն, Թուրքիայի հետ համագործակցության խորացումը ենթադրում է մեկ այլ հեռահար նպատակ. Դաշինքում հստակ գիտակցում են, որ վրաց-ռուսական պատերազմից հետո, երբ միջազգային ասպարեզում զգալիորեն մեծացավ Ռուսաստանի ազդեցությունը, Դաշինքի նախաձեռնությամբ ՆԱՏՕ-Ռուսաստան երկխոսության վերականգնման քայլերը կարող են ընկալվել որպես դիրքերի հերթական զիջում: Ցանկանալով հարթել կողմերի միջև նախկին կնճռոտ հարցերը և համագործակցել ռուսական կողմի հետ աֆղանական ուղղությամբ՝ Դաշինքում, ամեն դեպքում, չեն փարատվել մտահոգությունները, ի հաշիվ ՆԱՏՕ-ի դիրքերի, Մոսկվայի ազդեցության հնարավոր ընդլայնման հետ կապված: Խուսանավելով ՆԱՏՕ-Ռուսաստան բացահայտ առճակատումից՝ Հյուսիսատլանտյան դաշինքում, որպես Ռուսաստանին հակակշիռ գործոն, էական նշանակություն են տալիս Եվրասիայում և միջազգային հարաբերություններում առհասարակ Թուրքիայի ազդեցության մեծացմանը: Հարց, որն այսօր լիովին խոսում է Անկարայի դիրքերից: Դաշինքում սկսել են նույնիսկ «չնկատել» Թուրքիայի վարած ռազմական գործողությունները քրդաբնակ շրջաններում: Այդ տրամաբանության մաս են կազմում վերջերս մամուլում մեծ շրջանառություն գտած լուրերը, թե Արևելյան Եվրոպայում ամերիկյան ՀՀՊ համակարգերի տեղակայման հարցում ԱՄՆ-ի վարչակազմը և ՆԱՏՕ-ի ղեկավարությունը որպես այլընտրանք են դիտարկում Թուրքիան (նշվում են նաև Բալկանները, Ադրբեջանը): Իհարկե, միամտություն կլինի հավատալ, որ Արևելյան Եվրոպայում ԱՄՆ-ի ՀՀՊ համակարգի տեղակայման հարցի շուրջ Կրեմլի խորը դժգոհությունների լույսի ներքո Թուրքիայում հնարավոր համակարգերի տեղադրման շուրջ խոսակցությունները կարող են, մեղմ ասած, շրջանցվել Ռուսաստանի կողմից: Ուստի, նման խոսակցությունները, որոնք համենայն դեպս այսօր զուրկ են իրատեսությունից, միտված են սադրանքներ հրահրել Ռուսաստանի ու Թուրքիայի միջև, այդ թվում և հարավկովկասյան ուղղու-




թյամբ Ռուսաստանի դիրքերի ամրապնդման գործընթացին խոչընդոտելու նպատակներով:

*3. ԵՄ Թուրքիայի անդամակցությունը*

Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հարցը նույնպես դասվում է Անկարայի իշխանությունների որդեգրած արտաքին քաղաքականության կարևորագույն գերակայություններից մեկը: Թուրքական կառավարությունը շարունակում է հետևողական գտնվել Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության գործընթացի արագացված հանգուցալուծման ուղղությամբ՝ ձգտելով հնարավորինս արդյունավետ իրագործել եվրոպական ընտանիքի առջև իր կողմից ստանձնած պարտավորվածությունները: ԵՄ Թուրքիայի անդամակցության գործում Անկարային իր զգալի աջակցությունն է շարունակում ցուցաբերել Միացյալ Նահանգները: ԱՄՆ-ի նախագահ Օբամայի վարչակազմը այդ հարցում թերևս ավելի մեծ հաջողություններ կարող է արձանագրել. վերջինս, ի տարբերություն Բուշ-կրտսերի, կողմնակից է ավելի շուտ դիվանագիտական, քան թե ռազմական լծակների կիրառման: Արդյունքում ԱՄՆ-ԵՄ հարաբերություններում ԱՄՆ-ի նախկին վարչակազմի՝ Եվրոպայում ՀՀՊ համակարգի տեղակայման հարցը՝ որպես նաև Եվրոպայի ուղղությամբ ամերիկյան ռազմաքաղաքական ազդեցության ընդլայնման միջոց, փոխարինվեց դիվանագիտական

առաջնահերթությամբ, որի մի կարևոր բաղադրիչն է կազմում ԵՄ Թուրքիայի անդամակցության հիմնահարցը: Այս համատեքստում անհրաժեշտ է դիտարկել նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը, որի նախաձեռնման գործում, անշուշտ, զգալի է առաջին հերթին Միացյալ Նահանգների կատարած դերակատարությունը:

Բացի այդ, վերջին մի քանի տարիների ընթացքում ամերիկյան կողմի անմիջական նախաձեռնությամբ ու աջակցությամբ հետևողական և բավական լուրջ աշխատանքներ են իրականացվել Թուրքիայի ժողովրդավարացման ուղղությամբ, ինչի արդյունքում որոշակի առաջընթաց է արձանագրվել մարդու իրավունքների պաշտպանության, հասարակական կարծիքում առկա կարծրատիպերի ու բարդույթների հաղթահարման խնդրում, ինչը և հաստատում են որոշ միջազգային վարկանիշային կազմակերպություններ:

*4. Թուրքիա-իսլամադավան աշխարհ համագործակցության ընդլայնում*

Ս. թ. հունվարի 29-ին Դավոսի համաշխարհային տնտեսական ֆորումի ընթացքում տեղի ունեցած թուրք-իսրայելական աղմկահարույց միջադեպը, երբ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը սուր քննադատություն հնչեցրեց Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի հասցեին՝ Պաղեստինում Իսրայելի ռազմական գործողությունների կապակցությամբ, կոչված էր ցուցադրաբար ներկայացնելու պաշտոնական Անկարայի ձգտումը՝ դառնալու իսլամական (հիմնականում՝ սուննի) աշխարհի իրավունքների ու շահերի պաշտպանը, իսկ հնարավորության դեպքում՝ առաջնորդը: Այս միջադեպի առնչությամբ փորձագետներից շատերը հակված էին այն որակել որպես զուտ թուրք-իսրայելական հակասություններ և Մերձավոր Արևելքում դիրքերի ընդլայնման հարցում երկկողմ հակասություններ ու մրցապայքար: Այդ տեսակետը ամենևին էլ չի հակասում հաջորդ այն կարծիքին, ըստ որի երկկողմ հարաբերություններում առաջացած լարվածությունը, մյուս կողմից, որն ի դեպ գերազանցապես նախաձեռնվել էր թուրքական կողմից, միտված էր ընդլայնելու և ամրապնդելու Թուրքիայի՝ որպես իսլամական երկրի դերն ու հեղինակությունը իսլամադավան աշխարհում: Ավելին, վերջերս պաշտոնական Անկարան հրաժարվեց նաև Իսրայելի հետ ռազմաօդային ուժերի համատեղ զորավարժություններ անցկացնելու նախաձեռնությունից: Ի հակակշիռ Իրանի, Մերձավոր Արևելքում իր դիրքերի ու ազդեցության տարածման հարցում պաշտոնական Անկարան վերջին շրջանում ակտիվացրել է իր շփումներն ու համագործակցությունը «Համասի», ինչպես նաև Սիրիայի հետ (հիշատակենք ս. թ. հոկտեմբերի կեսերին երկու երկրների միջև վիզային ռեժիմի վերացման մասին համաձայնագրի ստորագրումը, նախատեսվող թուրք-սիրիական լայնածավալ զորավարժությունների նախապատրաստումը): Թուրքական կողմն ակտիվորեն ներգրավվել է արաբաիսրայելյան հակամարտության կարգավորման գործընթացում: Թուրքիայի արտաքին քաղաքականության իսլամական ուղղության զարգացման մասին են խոսում նաև Թուրքիայի՝ Իրանի հետ երկխոսության հաստատման նախաձեռնությունները, ինչի արդյունավետ իրագործումը թույլ կտա պաշտոնական Անկարային առավել ինքնավստահ հանդես գալու իսլամական աշխարհի առջև: Հիշատակենք, որ Իրանի նախագահական ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո, որոնք մեծ կասկածներ առաջացրին Արևմուտքում, Թուրքիան դասվեց այն առաջին երկրների շարքում, որոնք չհապաղեցին շնորհավորել Մ. Ահմադինեժադին նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ: Խորհրդանշական էր նաև ս. թ. հոկտեմբերի 26-ին Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի պաշտոնական այցը Իրանի Իսլամական Հանրապետություն, որտեղ երկկողմ հարաբերությունների զարգացմանը վերաբերող հարցերի քննարկումից զատ դրական գնահատվեց թուրքական կողմի միջնորդությունը Իրան-Պակիստան հարաբերություններում վերջերս տեղ գտած լարվածության թուլացման գործում: Նշենք, որ մինչ այս այցելությունը Էրդողանը գտնվում էր նաև Պակիստանում, որտեղ նույնպես առաջ էր քաշել իր միջնորդության նախաձեռնությունը:

Բավական խորհրդանշական պետք է համարել ս. թ. հուլիսի սկզբներին Թուրքիայի կրոնի հարցերով նախարար Բարդակօղլուի հայտարարությունը՝ կապված հուլիսի 6-ին Չինաստանի Սինցզյան-Ույգուրյան ինքնավար շրջանում (Ուրումչի քաղաք) տեղ գտած անկարգությունների հետ: Նրա

խոսքերով, «իսլամական աշխարհն ու միջազգային հանրությունը չպետք է անտարբեր լինեն Չինաստանում տեղի ունեցած դեպքերի նկատմամբ», և որ «Թուրքիան անհանգստացած է ույգուր թյուրքերի իրադրությամբ»:

Զգալի է Թուրքիայի դերակատարումը այնպիսի միջազգային իսլամական ազդեցիկ կազմակերպություններում, ինչպիսին է «Իսլամական կոնֆերանս» կազմակերպությունը: Տեղին է հիշատակել նաև ս. թ. սեպտեմբերի կեսերին «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության գլխավոր քարտուղար Էքմելեդդին Իհսանօղլուի՝ թուրքական Յոզգաթ քաղաքում հնչեցրած հայտարարությունն առ այն, որ «իսլամական աշխարհում Թուրքիայի դերն աճում է օրեցօր»:

Նշենք նաև, որ Դանիայի նախկին վարչապետ Ռասմուսսենի՝ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում նշանակվելու հարցում, կապված 2005 թ. սեպտեմբերին Մուհամեդ մարգարեի ծաղրանկարների միջադեպի հետ, լուրջ առարկություններ եղան հենց Թուրքիայի կողմից:

**Թուրքիա-Հարավային Կովկաս**

Թուրքիայի արտաքին քաղաքականությունում առանձնահատուկ կարևորություն է տրվում Հարավային Կովկասին, որտեղ վերջին ժամանակահատվածում տեղի ունեցող գործընթացները նոր լիցք են հաղորդել տարածաշրջանում թուրքական գործոնի կտրուկ ակտիվացմանը: Մասնավորապես 2008 թ. օգոստոսյան վրաց-ռուսական պատերազմով նոր փուլ արձանագրվեց Թուրքիա-Հարավային Կովկաս փոխհարաբերություններում, ինչի արդյունքում պաշտոնական Անկարայի համար, ի հաշիվ այլ դերակատարների, նոր հնարավորություններ ստեղծվեցին ընդլայնելու ներգրավվածությունը Հարավային Կովկասում: Երկու կարծիք թերևս լինել չի կարող այն հարցում, որ մեր տարածաշրջանում թուրքական գործոնի ակտիվացումը պայմանավորված է այս ուղղությամբ այլ արտաքին դերակատարների և առաջին հերթին ԱՄՆ-ի և ԵՄ միջամտությամբ ու շահագրգռվածությամբ: Մյուս կողմից, ինչպես ցույց են տալիս իրադարձությունները, տարածաշրջանում Թուրքիայի դիրքերի ընդլայնմանն ուղղված այս գործընթացի կապակցությամբ բավական պասիվ, նույնիսկ կարելի է ասել՝ թվացյալ «չեզոք» դիրքորոշում է որդեգրել տարածաշրջանային մեկ այլ տերություն՝ Ռուսաստանի Դաշնությունը, որը շարունակում է Հարավային Կովկասը դիտարկել, այսպես ասած, իր ազդեցության ավանդական գոտիներից մեկը: Այս ամենի արդյունքում թերևս հիմնավորված տպավորություն է ստեղծվում առ այն, որ Կրեմլի լռությունը, կապված տարածաշրջանում թուրքական գործոնի ակտիվացման հետ (հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում և այլն), մեղմ արտահայտված, ամենևին էլ պատահականություն չէ: Ավելին, տարածաշրջանում թուրքական գործոնի առաջխաղացման խնդիրը հարկավոր է դիտարկել 2009 թ. սկզբից մեկնարկած ԱՄՆ-Ռուսաստան երկխոսության ու փոխվստահության վերականգնման գործընթացի շրջանակներում և տրամաբանությունում: Կարելի է հավաստել, որ հարավօսական իրադարձություններով դրվեց Հարավային Կովկասի շահերի վերադասավորման որակապես մի նոր գործընթացի մեկնարկը, որտեղ զգալիորեն ընդլայնվեցին հատկապես Թուրքիայի դիրքերը: Փորձենք կենտրոնանալ այդ հարցերի լուսաբանման շուրջ:

* Հարավօսական իրադարձություններից հետո Ռուսաստանի Դաշնության կողմից Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչումը, ինչպես փորձագետներից քչերն են նկատում, վկայում է ոչ այնքան այս հանրապետություններում ռուսական ազդեցության խորացման մասին, որքան փաստում Ռուսաստանից դրանց (առաջին հերթին Աբխազիայի) օտարման գործընթացի մասին: Ավելին, ինչպես ցույց են տալիս ընթացիկ զարգացումները, Աբխազիայի իշխանությունները, Ռուսաստանի կողմից երկրի անկախության հռչակումից հետո ակտիվացրել են շփումներն ու համագործակցությունը պաշտոնական Անկարայի հետ: Որոշ ոչ պաշտոնական խոսակցությունների համաձայն, Կրեմլում լուրջ խնդիրներ են առաջացել Աբխազիայի գործող նախագահ Ս. Բագապշի հետ, որը բավական սերտ հարաբերություններ ունի Թուրքիայի ղեկավարության որոշակի շրջանակների հետ: Ավելին, Մոսկվայում շարունակվում են մտահոգությունները Աբխազիայում ս. թ. դեկտեմբերի 12-ին նշանակված՝ երկրի անկախացումից ի վեր առաջին նախագահական ընտրությունների հետ կապված, ինչը վկայում է Կրեմլի ու Աբ-

խազիայի գործող ղեկավարությունների միջև առաջացած որոշակի անվստահության ու լարվածության մասին: Հիշատակենք վերջին շրջանում շրջանառվող լուրերն այն մասին, որ Թուրքիան կարող է ճանաչել Աբխազիայի անկախությունը՝ Ռուսաստանի Հյուսիսային Կիպրոսի թուրքական ինքնահռչակ հանրապետության անկախության ճանաչման դիմաց:

* Ռուսաստանի հետ լարված հարաբերությունների առկայության պայմաններում, հատկապես վրաց-ռուսական պատերազմից և ՌԴ կողմից Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչումից հետո, ի հակակշիռ ռուսական կողմի, Վրաստանի իշխանությունները ակտիվացրել են կապերը Թուրքիայի հետ: Մյուս կողմից, ինչպես իրավացիորեն նկատում են փորձագետներից շատերը, հարավօսական դեպքերից հետո զգալիորեն նվազել է Վրաստանի տարածաշրջանային քաղաքական ու տնտեսական (էներգետիկ) դերն ու նշանակությունը, ինչին փաստորեն և ձգտում էր ռուսական կողմը: Արդյունքում Թուրքիայի համար ստեղծվել է լավ հնարավորություն օգտվելու ստեղծված իրավիճակից և «սիրաշահելով» Թբիլիսիի իշխանություններին՝ ընդլայնելու թուրքական գործոնի ազդեցությունը հարավկովկասյան այդ հանրապետությունում: Ավելին, այս փուլում վրաց-թուրքական համագործակցության զարգացմանը կարող է զգալիորեն նպաստել ԱՄՆ-Վրաստան, ՆԱՏՕ-Վրաստան հարաբերություններում նկատելի դադարը, ինչը պայմանավորված է Միացյալ Նահանգների՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացով: ԱՄՆ-ի վարչակազմն իր հերթին, չցանկանալով նոր լարվածություն հրահրել ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններում և միևնույն ժամանակ չվատթարացնելով Վրաստանի հետ իր հարաբերությունները, փորձում է կտրուկ նահանջ չկատարել ԱՄՆ-Վրաստան ռազմաքաղաքական գործընկերային համագործակցությունից և հնարավորինս պահպանել երկխոսության անհրաժեշտ մակարդակ այլ դաշնակից երկրների և առաջին հերթին Թուրքիայի միջնորդությամբ:

* Տարածաշրջանում թուրքական գործոնի ակտիվացմանը էապես կնպաստի վերջերս մեկնարկած հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը և Թուրքիայի կողմից Հայաստանի հետ ունեցած սահմանի հնարավոր վերաբացումը: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման թեմատիկան այսօր այնքան է ակտուալացել, որ կարծես թե ետին պլան է մղել տարածաշրջանում ընթացող այլ զարգացումները: Թուրքիայի համար Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման խնդիրը այսօր պայմանավորված է, մի կողմից, ԵՄ Թուրքիայի անդամակցության գործընթացով: Ուստի կարելի է հաստատել, որ առաջիկայում թուրքական կողմը կպահպանի իր շահագրգռվածությունը Հայաստանի հետ իր հարաբերությունների կարգավորման ուղղությամբ՝ ոչ հեռու ապագայում հնարավոր համարելով նաև Հայաստանի հետ սահմանի վերաբացումը: Մյուս կողմից, Թուրքիայի կողմից Հայաստանի հետ ունեցած սահմանի վերաբացման հարցում շահագրգռված են Վաշինգտոնում, ինչը թույլ կտա ակտիվացնել Ռուսաստանին հարավային կողմից շրջանցող հաղորդակցությունների հոսքերը:

* Չնայած հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի հետևանքով Թուրքիա-Ադրբեջան համագործակցությունում առաջացած որոշակի լարվածությանն ու անվստահությանը, այնուհանդերձ, ադրբեջանական ուղղությամբ թուրքական կողմը շարունակում է






տիրապետել զգալի լծակների, որոնք թույլ կտան վերջինիս պահպանել իր դիրքերը Ադրբեջանում: Թուրքիայի հետ Ադրբեջանի իշխանությունները որոշակի հակասություններ ունեն նաև Նախիջևանի հիմնահարցում, որտեղ տեղի ունեցող ժողովրդագրական (Թուրքիայի քրդերի բնակեցման ակտիվացում), ներիշխանական (հակասություններ Ադրբեջանի կենտրոնական ղեկավարության հետ) ու միգրացիոն խնդիրները (Նախիջևանի բնակչության շարունակվող արտահոսք Թուրքիա) հակասում են Ադրբեջանի ազգային անվտանգությանը: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը և Թուրքիայի կողմից Հայաստանի հետ ունեցած սահմանի հնարավոր վերաբացումը նախիջևանյան հիմնահարցի առնչությամբ թերևս նոր լարվածություն կառաջացնի թուրք-ադրբեջանական հարաբերություններում, ինչի ուղղությամբ արդեն այսօր որոշակի զարգացումներ դառնում են շոշափելի:

* Հարավային Կովկասում թուրքական գործոնի ակտիվացմանը նպաստում է նաև հարևան Իրանի Իսլամական Հանրապետության բավական պասիվ դիրքորոշումը տարածաշրջանում ընթացող զարգացումների նկատմամբ: Լինելով տարածաշրջանային առանցքային երկրներից մեկը՝ իրանական կողմը, սակայն, չի օգտագործում իր լծակների զգալի պոտենցիալը տարածաշրջանում իրանական գործոնի ակտիվացման ուղղությամբ, ինչը հնարավորություն է տալիս, ի հաշիվ վերջինիս, այլ երկրների՝ Ռուսաստանի ու Թուրքիայի ազդեցության տարածմանը: Մյուս կողմից, տարածաշրջանում իրանական գործոնի քաղաքական ներկայացվածությունը կրում է բավական միջնորդավորված բնույթ և հիմնականում պայմանավորվում է այլ երկրների՝ Ռուսաստանի ու Միացյալ Նահանգների հետ Իրանի ունեցած հարաբերություններով:

---

***Հետևություններ***

*Վերջին մի քանի տարիների կտրվածքով միջազգային հարաբերություններում (ռազմաքաղաքական, տնտեսական և էներգետիկ) զգալիորեն աճել է Թուրքիայի դերակատարությունը: Նշված ժամանակահատվածում թուրքական գործոնը կարողացել է է՛լ ավելի ակտիվ ներգրավվել այդ թվում և հարավկովկասյան ու մերձտարածաշրջանային գործընթացներում: Հարավային Կովկասում Թուրքիայի դիրքերի հաստատմանը նպաստում են միջազգային հարաբերություններում ստեղծված իրադրությունը և մասնավորապես ԱՄՆ-Ռուսաստան երկխոսության գործընթացը: Վերջին շրջանում մեր տարածաշրջանում թուրքական գործոնի ակտիվացման միտումները թույլ են տալիս գալ այն հետևության, որ պաշտոնական Անկարան իր առջև խնդիր է դրել դառնալու Հարավային Կովկասի և մերձտարածաշրջանի առանցքային խաղացողներից մեկը, եթե ոչ կարևորագույնը՝ ունենալով տարածաշրջանային գերտերություն դառնալու բացահայտ հավակնություններ: Տարածաշրջանում տիրապետող դիրքեր հաստատելու՝ Անկարայի ձգտումները ուղղակի թե անուղղակի առնչություններ ունեն ՀՀ տարածաշրջանային անվտանգության հետ, ուստի ելնելով այդ տրամաբանությունից՝ մեր առջև ծառացող կարևոր հարցերից մեկը վերաբերում է տարածաշրջանում ներգրավված արտաքին հիմնական դերակատարների ու շահագրգիռ կողմերի միջև շահերի փոխադասավորվածության հավասարակշռության հնարավորինս պահպանմանը:*



# Մեր սոցիալիզմի մասին

Կարէն Խանլարեան

### ԱԶԳԻ ԲՈՎԱՆԴԱԿ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

ՀՅ Դաշնակցութեան 1982 թ. եւ 1998 թ. ծրագրերը քննադատել եւ քննադատում են այն հարցում, թէ ինչպէս կարելի է, որպէս յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւն, հանդէս գալ ազգի բովանդակ շահերի պաշտպանութեան դիրքերից:

Թւում է, թէ սոցիալիստական կուսակցութիւնը պէտք է պաշտպանի սոցիալական որոշակի դասակարգի կամ խաւերի շահերը միայն: ՀՅԴ գաղափարախօսական ըմբռնումներից ելնելով, սակայն, սոցիալական արդարութիւնը պէտք է նպաստի ոչ միայն աշխատաւորութեանը, այլեւ բովանդակ հասարակութեանը, ազգային բնականոն կեանքի պայմանների առկայութեան դէպքում՝ բովանդակ ազգին: Մեր առաջարկած արդարութեան մոդելը որքան էլ առարկայականօրէն բախուի ունեւոր խաւերի անմիջական շահերին, կամ համընկնի ընչազուրկ եւ աշխատաւոր խաւերի շահերին, չի սահմանում դասակարգային բնոյթ: Այլ խօսքով՝ մեր գաղափարական արժէքներից բխած մեր սոցիալիստական եւ դեմոկրատական ծրագրերը, անխուսափելիօրէն, իրենց մէջ պարունակելով սոցիալական բազայի որոշ հասկացութիւն՝ առաջադրւում են ազգային մասշտաբով:

Թերեւս սա է մեր եւ բոլշեւիկեան կոմունիզմի հիմնարար տարբերութիւններից մէկը:

Պէտք է նկատի ունենալ նաեւ, որ այժմէական հասարակութիւններում դասակարգերի, շերտերի սահմանումը խիստ յարաբերական է: Հայաստանեան աշխատաւոր կամ բանուոր հասկացութիւնը տարբեր է անգլիականից: Առաւել տարբեր է հայաստանեան հարուստ կամ մեծահարուստ հասկացութիւնը եւրոպականից: Որեւէ հասարակութեան դասակարգային դասական սխեման կազմելու համար, պէտք է հաշուի առնել տուեալ հասարակութեան ինչպէս տնտեսական կացութաձեւը, այնպէս էլ հասարակական յարաբե-



րութիւնների ամբողջութիւնը եւ դրա դինամիկան: Դասակարգային շահերն էլ, հետեւաբար, ճշտւում են նոյն կերպ: Մանաւանդ Հայաստանում դասակարգ հասկացութիւնը շատ հեռու է կաստայից: Ակտիւ եւ մեծ դինամիկա է աշխատում, յատկապէս, միջին եւ փոքր սեփականատիրութեան ոլորտներում: Այս պարզ իրողութեան լոյսի տակ նաեւ անհեթեթ է դառնում «դասակարգային կուսակցութեան» ընդհանուր հասկացութիւնը:

Սոցիալիստական իրական ուժի հասարակական օրակարգի մնայուն հարցը պէտք է լինի դասակարգային շահերի ընդհանրական ուղղուածութեան բնորոշումը:

Եւս մի կարեւոր հանգամանք. տնտեսական անառողջ իրավիճակում, ուր առկայ են մոնոպոլիզացիան, կոռուպցիան, էներգետիկ ճգնաժամը, գնագոյացման սխալ մեխանիզմը եւ այլն եւ այլն, եթէ նոյնիսկ մոգական գաւազանի զօրութեամբ հնարաւոր լինի աշխատաւորին վերադարձնել նրանից խլուած «յաւելեալ արժէքի» ամբողջութիւնը, նոյնիսկ այդ դէպքում, նա չի կարող հասնել բարօրութեան նուազագոյն կենսամակարդակի: Նման պայմաններում էլ հնարաւոր չէ պաշտպանել միմիայն որոշակի դասակարգի շահերը, այլ պէտք է առաջնորդուել համակարգային փոփոխութեան սկզբունքով: Սա ընդգծեցինք՝ ասելու համար, որ «բովանդակ ազգի շահերի պաշտպանութեան» դաշնակցական ըմբռնումն արդիական է եւ բնորոշ մերօրեայ իրականութեանը:

## ԿԻՍԱՄԻՋՈՑՆԵՐ

Հարկաւոր է նաեւ ուսումնասիրել այն ուղիները, որոնց միջոցով կարելի կը դառնայ, առանց գործադիր իշխանութեան մաս կազմելու կամ դրա պետական լծակներից օգտուելու, իրականացնել ՀՅԴ գաղափարները: Դասական մի քանի ուղիներ կան այս նպատակին հասնելու համար.

**ա. Օրէնսդիր դաշտ եւ պառլամենտարիզմ.** Եւրոպական սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական եւ լէյբորիստական բազմաթիւ կուսակցութիւններ ցարդ յաջողել են, առանց գործադիր իշխանութեան դաշտում պատասխանատուութիւն ստանձնելու, օրէնսդիր դաշտում անցկացնել օրէնքներ, որոնք ապահովում են հասարակական բարօրութեան որոշ երաշխիքներ: Օրինակ՝ աշխատանքային պայմանների բարելաւման, հանրային ապահովագրութեան, մատչելի կամ ձրի առողջապահութեան, կանանց իրաւահաւասարութեան մասին օրէնքներ եւ այլն: Պէտք է նշել, որ բազմաթիւ ոլորտների առնչուող օրէնքների անցկացման պրոցեսը, իհարկէ, ենթադրում է խորհրդարանական մեծամասնութիւն ունենալու նախապայման: Այնուամենայնիւ, փոքրամասնութիւն լինելու դէպքում էլ, հնարաւոր է որոշ քայլեր ձեռնարկել, որոնք կ'արժանանան մեծամասնութեան հաւանութեանը:

**բ. Տեղական ինքնակառավարման ոլորտ եւ տեղական նշանակութեան խնդիրների իրականացում.** Այս ոլորտում օրէնսդիր եւ գործադիր պատասխանատուութեան ստանձնման ճանապարհով եւս կարելի է անցկացնել օրէնքներ եւ իրականացնել գործողութիւններ՝ սոցիալական արդարութեան եւ բարօրութեան ուղղութեամբ: Այս առումով արժէ յիշատակել ԱՄՆ-ի Միլուաքի նահանգի պարագան, ուր ԱՄՆ-ի սոցիալիստական հոսանքը, դաշնային մակարդակով լծակներ չունենալով հանդերձ, յաջողել է քաղաքապետարաններում լծակներ ձեռք բերել եւ տարիների ընթացքում բաւականին լուրջ քայլեր ձեռնարկել սանձարձակ արդիւնաբերութեան բացասական հետեւանքները մեղմելու, աշխատաւորութեան կեանքը բարելաւելու համար, եւ այդպիսով կապիտալիզմի օվկիանոսում ստեղծել արդարութեան համեմատական կայուն կղզի:

**գ. Արհեստակցական եւ համագործակցական համակարգերի**

**ոլորտ.** Վերը նշուած ոլորտներից զատ, սոցիալիստական հոսանքների վաղեմի մօտեցումներից է եղել այս ոլորտի ձեւաւորումը: Կարելի է միջոցներ ձեռք առնել արհեստակցական միութիւններին կից աշխատանքային տներ, արհեստանոցներ եւ արտելներ ստեղծելու համար, որոնք, որպէս «երկրորդ աշխատանքի» հնարաւորութիւն, աշխատաւորութեանը կ'ապահովեն յաւելեալ եկամուտ եւ, զարգացման դէպքում, կը վերածուեն ազդու լծակների գնագոյացման համակարգի սանձարձակութիւնները հակակշռելու համար: Ըստ էութեան սոցիալիստական գործունէութեան այս կոնտեքստում կարելի է արծարծել նաեւ ցածր տոկոսադրոյքով եւ մարման երկարատեւ ժամկէտով բնակարանների իրացման հարցը: Այս ոլորտում կարելի է ստեղծել մասնագիտական սպասարկումների (իրաւական, բժշկական, ճարտարապետաշինարարական, սեյսմիկ անվտանգութեան, աշխատանքային եւ այլն) ինֆորմացիոն եւ խորհրդատուական համակարգեր, քաղաքային եւ գիւղական պայմաններին յատուկ համագործակցական հաստատութիւններ:

## ՍՈՑԻԱԼԻԶՄ՝ ՖՈՐՄԱՑԻԱ՞, ԹԷ՞ ՀԱՄԱԿԱՐԳ

Պատմութեան զարգացման ֆորմացիոնալ տեսութիւնը, որը հիմնւում է Մարքսի պատմական նիւթապաշտութեան փիլիսոփայութեան վրայ, ըստ էութեան, ստրուկտուրալիստական է: Հասարակական ֆորմացիաներով կարելի է միայն բնորոշել հասարակութեան կառուցուածքը, բայց ոչ գործառոյթը եւ դրա դինամիկան:

Պատմական եւ դիալեկտիկական մատերիալիզմի մարքսեան




մեթոդաբանութեամբ, տնտեսութիւնը համարւում է որպէս հիմնարար գործօն, որի հիման վրայ բնորոշւում են միւս բոլոր բնագաւառները՝ քաղաքականից ու իրաւականից մինչեւ մշակութային եւ հոգեմտաւոր:

Առարկայական կեանքն ու իրական պատմութիւնը ցոյց են տալիս, որ տնտեսութիւնը, ազդեցութեան իմաստով, համազօր է միւս գլխաւոր գործօններին՝ քաղաքականութեանը, մշակոյթին, գիտութեանը, եւ տեւական փոխազդեցութեան մէջ է դրանց հետ: Հետեւաբար միայն տնտեսական եւ հասարակական կարգերի փոփոխմամբ հնարաւոր չէ հասնել կատարեալ արդարութեան՝ առանց առընթեր նաեւ քաղաքական, իրաւական, մշակութային եւ բազմաթիւ գործօնների զարգացման՝ ամբողջական հոլովոյթով: Այս դիտանկիւնից, սոցիալիստական գաղափարը դառնում է ամբողջական եւ ինտեգրալ հասկացութիւն եւ չի տեղաւորւում միայն հասարակարգային սահմաններում: Սոցիալիստական գաղափարն առնչւում է կեանքի բոլոր բնագաւառների միջեւ յարաբերութիւնների նորովի կարգաւորմանը: Հետեւաբար այս գաղափարն օժտուած է համակարգային ինքնութեամբ եւ աւելի բարձր իմաստ է պարունակում, քան հասարակական ֆորմացիայի փոփոխութիւնը:

Ֆորմացիոնալ փոփոխութիւնների տեսութեան վրայ հիմնուած սոցիալիստական գաղափարները շահագործման եւ տիրապետութեան երեւոյթների խորքում փորձում են տեսնել զուտ տնտեսական մի հիմնաքար: Ըստ այդմ նրանք յանգում են մի եզրակացութեան,



համաձայն որի, տնտեսական նշուած հիմնաքարի բացառմամբ, կարելի է վերացնել շահագործման եւ տիրապետութեան երեւոյթները: Այս մտայնութեան հետքերով, դասական սոցիալիստական միտքը (այդ թւում նաեւ ՀՅ Դաշնակցութիւնը), մինչեւ անցեալ դարասկիզբ, հաւաստացած է եղել, որ մասնաւոր սեփականութիւնն է տնտեսական այդ հիմնաքարը («հիմնական չարիքը»,- ըստ ՀՅԴ 1907 թ. ծրագրի): Դեռ աւելին, մասնաւոր սեփականութիւնը համարւում էր կապիտալիստական ֆորմացիայի ինչպէս գոյատեւման, այնպէս էլ դինամիկայի ամենաբնորոշ մոտիւացիան:

Սակայն Խորհրդային Միութեան սոցիալ-տնտեսական կեանքի փորձը կարճ ժամանակամիջոցում ապացուցեց, որ շահագործման եւ տիրապետութեան երեւոյթն անհրաժեշտաբար չի բխում սեփականութեան հիմնաքարի հասկացութիւնից եւ ունի գոյութեան միանգամայն այլ պատճառներ: Բոլշեւիկները ոչնչացրին ռուսական աւատապետական ֆորմացիան, իսպառ ջնջեցին մասնաւոր սեփականութիւնը, բայց այդ ամենից յետոյ ստեղծուեց նախկինին ոչ մի բանով չզիջող եւ դեռ որոշ առումներով առաւել դաժան շահագործման մի նոր ֆորմացիա՝ պետական կապիտալիզմ:

Եզրակացնենք. սոցիալիզմի բուն նպատակն անցեալից բազում լաւ ու վատ էատարրեր ժառանգած առկայ հասարակական ֆորմացիայի եւ միւս բնագաւառների՝ քաղաքական վարչակարգի, օրէնսդրական իրաւակարգի եւ մշակութային-հոգեմտաւոր ներաշխարհի միջեւ փոխյարաբերութիւնների մի նոր որակի, մի նոր համակարգի կերտումն է: Այնպիսի մի համակարգ, որն ի վիճակի է նշուած ոլորտները, աստիճանաբար, մաքրելու անմարդկային կոպիտ եւ յոռի երեւոյթներից:

## ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՆԱՓՈՒԼ ԵՒ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏԸ

Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ, նէոլիբերալիզմը գաղափարական արշաւ սանձազերծեց ձախ հոսանքի դէմ, որի արդիւնքում գաղափարախօսական որոշ նահանջ ապրեց




բուն սոցիալիստական միտքը, որը տարիներ շարունակ ձգտում էր, արեւմտեան դասական կապիտալիզմը եւ խորհրդային տոտալիտար պետական կապիտալիզմը մերժելով, մշակել եւ իրականացնել սոցիալական արդարութեան սեփական մոդելը: Այսպէս 1990-ականներին հասարակական բնագաւառում «համընդհանուր բարօրութեան պետութիւն» եւ «սոցիալական պետութիւն» սոցիալիստական հասկացութիւններին հակադրուեց «նուազագոյն պետութիւն» նէոլիբերալական հասկացութիւնը, տնտեսութեան բնագաւառում «սոցիալական շուկա» մոդելին կրկին դէմ դրուեց «ազատ շուկա» մոդելը, իսկ քաղաքական բնագաւառում սոցիալ-դեմոկրատիա գաղափարին դէմ դրուեց լիբերալ դեմոկրատիա գաղափարը:

Յատկապէս վերջին ֆինանսական ճգնաժամը ցոյց տուեց, որ «ազատ շուկայական» տնտեսութիւնը, հակառակ նէոլիբերալ տեսաբանների բուռն պնդման, ինքնակառավարուող եւ ինքնակարգաւորուող համակարգ չէ: «Ազատ շուկա»-ն, իր բնական կեանքի ընթացքում, անխուսափելիօրէն ունենում է հետեւեալ հանգրուանները.

**ա. նախնական փուլ,** որը յատկանշւում է փոքր, միջին եւ մեծ կապիտալների սանձարձակ մրցակցութեամբ, գնագոյացման մեխանիզմի անկայունութեամբ, գների տատանումով, արտատնտեսական եւ կլանային սիստեմիկների ստեղծմամբ եւ աշխատանքային հնարաւորութիւնների առատութեամբ,

**բ. միջին փուլ,** որը յատկանըշւում է մոնոպոլիզացիայի ձեւաւորմամբ, յորդումով, գների աճով, ստուերային տնտեսութեան մեծացմամբ, հարկային դաշտի ակտիւացմամբ, փոքր կապիտալների փոշիացմամբ, միջին կապիտալների նուազմամբ,

**գ. վերջնական փուլ,** որը յատկանշւում է մոնոպոլիաների տիրապետութեամբ, միջին կապիտալների անհետացմամբ, խոշոր կապիտալիստական խաւի օլիգարխացմամբ, օրէնդիր դաշտի

ապաքաղաքականացմամբ, պետութեան դերակատարութեան նուազմամբ, հասարակական խոր ճեղքուածութեամբ եւ դրա արդիւնքում՝ դասակարգային բեւեռացմամբ, գնագոյացման մեխանիզմի որոշակի կայունութեամբ եւ գործազրկութեան բարձր չափերով:

Վերջին փուլում սաղմնաւորւում է հասարակութեան քայքայումը, որը կարող արտայայտուել տնտեսական ճգնաժամով եւ որը կարող է յանգել հասարակական բողոքի շարժման կամ սոցիալական յեղափոխութեան:

Հասարակութիւնը ողբերգական վիճակների չմատնելու հեռանկարով է այսօր հանդէս գալիս սոցիալիստական միտքը, «ազատ շուկայական» համակարգն օրէնսդրութեան ճամբով պետական եւ քաղաքացիական հակակշռին ենթարկելու ռազմավարութեամբ եւ սոցիալական արդարութիւնն ու բարօրութիւնն իրականացնելու նպատակով:

Հակակշռման լծակները եւ համապատասխան մեխանիզմները, հիմնականում, արտայայտւում են ապահովագրական, հարկային, վարկային, տարարժութային եւ մաքսային քաղաքականութիւնների միատեղմամբ եւ համարկմամբ:

Այս գաղափարների իրականացման ուղղութեամբ լուրջ քայլեր են արել անգլիացի լէյբորիստները 1940-ականների երկրորդ կէսին՝ յետպատերազմական Բրիտանիայում: Լէյբորիստական այս բնորդը, որը հռչակուեց «համընդհանուր բարօրութեան պետութիւն», յետագայում, առաւել արդիւնաւէտ կերպով, կիրառուեց սկանդինաւեան երկրներում՝ շնորհիւ սոցիալիստական եւ սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնների:

«Համընդհանուր բարօրութեան պետութիւն» հասկացութիւնը խորքային ընդհանրութիւններ ունի մի կողմից «քաղաքացիական հասարակութիւն» եւ միւս կողմից՝ «սոցիալական պետութիւն» հասկացութիւնների հետ: «Համընդհանուր բարօրութեան պետութիւն»-ում պետութիւնը, օրէնսդրական լծակների միջոցով, հսկում է տնտեսական կեանքի բովանդակ ընթացակարգը եւ դերակատարութիւն է ստանձնում շուկայի կարգաւորման գործում: Որքան էլ գրագէտ եւ քաղաքակիրթ լինեն ֆուտբոլի երկու հաւաքականի խաղացողները, այնուամենայնիւ հնարաւոր չէ նրանց խաղը պատկերացնել առանց իրաւարարի,- ըստ գերմանացի հանճարեղ տնտեսագէտ Էրհարդի, ահա այստեղ կարելի է բնորոշել պետութեան դերը՝ գործարար եւ սպառող կողմերին, կապիտալիստ եւ անապահով խաւերին առընչուող շուկայում, ինչին բազմաթիւ հասարակագէտներ եւ տնտեսագէտներ «սոցիալական շուկայ» են անուանում:

Սոցիալիստական մտքի համար այսպիսի մի շուկայ, ուր առկայ է պետութեան իրաւարար դերը, համարւում է անցումային միջնափուլ:

Անցումային միջնափուլը սոցիալիստական մօտեցմամբ բնորոշելու համար կարելի է դիմել հետեւեալ բանաձեւին. արդարութեան ճանապարհն անցնում է բարօրութեան ընդմիջից:

Անցման այս ճանապարհին, հասարակական, տնտեսական, քաղաքական եւ մշակութային զարգացման համար պէտք է առկայ լինի մրցակցութեան եւ գործակցութեան միատեղ եւ միաժամեայ գոյութեան սկզբունքը: Դեմոկրատիայի պայմաններում արագ թափով ստեղծւում է հորիզոնական մրցակցութիւն բոլոր ոլորտներում: Սակայն առանց պետական օրէնսդրութեան եւ համապատասխան մեխանիզմների, երաշխիքներ չեն գոյանայ զարգացող մրցակցութեան հետեւանքով առաջացող սանձարձակութիւնները հակակշռելու եւ համարկման հունը հարթելու համար: Հետեւաբար պէտք է նախատեսուի գործակցութեան սկզբունքը, որն էլ, մրցակցութեան սկզբունքին համազօր, նոյնքան կարեւոր եւ անհրաժեշտ է: Հէնց այստեղից է կայանում նեոլիբերալական եւ սոցիալիստական գաղափարների նուրբ, բայց էական եւ սկզբունքային տարբերութիւնը:

Այլ խօսքով՝ «քաղաքացիական հասարակութիւնը» եւ «սոցիալական պետութիւնը», եթէ պարպւում են գործակցութեան, համարկման սկզբունքից, ապա ընթանում են տագնապալի ուղիներով եւ վերածւում հասարակական չարիքի: Իսկ գործակցութեան սկզբունքով օժտուելու պարագայում, դրանք, ըստ էութեան, սերտաճում են «համընդհանուր բարօրութեան պետութեան» հետ եւ հարթում դէպի սոցիալական արդարութիւն տանող ուղին:

Եթէ ծայրայեղ ձախը (կոմունիստական հոսանքը), ըստ իր գաղափարախօսական հիմունքների, ձգտում է հաւասարութեան եւ մրցակցութեան սկզբունքը ջնջելուն, իսկ նեոլիբերալական հոսանքը ձգտում է հասնել անհատական ազատութեան դրութեան, բացառելով գործակցութեան սկզբունքը, ապա սոցիալիստական միտքը, որդեգրելով մրցակցութեան եւ գործակցութեան երկուստեք սկզբունքները, ձգտում է օպտիմալացուած հաւասարութեան եւ օպտիմալացուած ազատութեան պայմաններում հասնել առաւելագոյն արդարութեան:



# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՐԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արծվիկ Մինասյան




20-րդ դարի առաջին ցեղասպանության (Հայոց Մեծ եղեռնի), որպես մարդկության դեմ կատարված հանցագործության, ճանաչումն ու դատապարտումն ի թիվս այլ գործողությունների պահանջում է նաև ցեղասպանությունն ուրանալու պատասխանատվության օրենսդրական ամբողջական ապահովում:

Հայաստանի Հանրապետության 23.08.1990 թվականի անկախության հռչակագրի 11-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետությունը սատարում է Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, իսկ 12-րդ մասի համաձայն հռչակագիրը հիմք է Սահմանադրության և Հանրապետության օրենսդրության մշակման, ինչպես նաև պետական մարմինների գործունեության համար:

Հայոց ցեղասպանության միջազգային ճա-




ճանաչման ու դատապարտման որդեգրված ուղեգծի ևս մեկ հաստատում է Հայաստանի Հանրապետության անվտանգության ռազմավարությունում ամրագրված դրույթը, ըստ որի՝ հետամուտ լինելով Հայոց ցեղասպանության համընդհանուր, մասնավորապես Թուրքիայի կողմից ճանաչմանը և դատապարտմանը՝ Հայաստանն այն դիտարկում է ոչ միայն պատմական արդարության վերականգնման, այլև ապագայում նման ոճիրները կանխարգելելու համատեքստում:

Հայաստանի օրենսդրության կարևոր մաս է համարվում միջազգային իրավունքը: Ինչպես ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածում՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, և եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Հայաստանի կողմից 2003 թվականի հունվարի 28-ին Ստրասբուրգում ստորագրված կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիայի «Համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին» լրացուցիչ արձանագրության 6-րդ հոդվածը սահմանում է համակարգչային համակարգի միջոցով մարդկության դեմ ուղղված հանցագործությունները և ցեղասպանությունը հերքելուն, մեղմացնելուն, հավանություն տալուն կամ այն արդարացնելուն միտված նյութեր տարածելու արարքը քրեականացնելու անհրաժեշտությունը: Թեև այս արձանագրու-




թյունը Հայաստանի համար ուժի մեջ է մտել ընդամենը 2007 թվականի փետրվարի 1-ից, սակայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում 2006 թվականի դեկտեմբերի 5-ին կատարված լրացմամբ (ուժի մեջ է մտել 2007 թվականի հունվարի 20-ից) ավելացվեց 397.1-րդ հոդվածը: Հոդվածով սահմանվում է. համակարգչային համակարգի միջոցով հանրությանը նյութեր տարածելու կամ որևէ այլ ձևով մատչելի դարձնելու միջոցով ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, հավանություն տալը կամ արդարացնելը, եթե դա կատարվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկական ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

Միջազգային փորձը վկայում է, որ ցեղասպանությունը հերքելը, մերժելը կամ ուրանալը քրեորեն պատժելի արարք է համարվում աշխարհի շատ երկրներում: Մասնավորապես՝ Շվեյցարիայում 1994 թ. ընդունված օրենքը պատիժ է սահմանում մինչև 3 տարի ազատազրկում և տուգանք, Ավստրիայում 1992 թ. ընդունված օրենքի համաձայն՝ 1-20 տարի ազատազրկում և խոշոր տուգանք, Բելգիայում՝ 1995 թ. օրենքի համաձայն 8 օրից 1 տարի ազատազրկում և խոշոր տուգանք, Ֆրանսիայում՝ 1990 թ. օրենքի համաձայն սահմանվում է 1 ամսից մինչև 1 տարի ազատազրկում և/կամ խոշոր տուգանք, Գերմանիայում՝ 1985 թ. և 1995 թ. օրենքների համաձայն համապատասխանաբար մինչև 1 տարի և մինչև 5 տարի ազատազրկում, Իսպանիայում՝ 1996 թ. ընդունված օրենքով սահմանվում է ազատազրկում 1-2 տարի և մեծ տուգանք, Իսրայելում՝ ըստ 1986 թ. ընդունված օրենքի սահմանվում է 5 տարի ազատազրկում, իսկ Ռուսաստանի Դաշնությունում պատիժը նախատեսվում է 12-20 տարի ա-






զատազրկում: Հատկանշական է, որ Եվրոպական միությունը 2008 թ. փետրվարի 26-ին ընդունված 16771/07 օրենսդրական ակտ կամ այլ գործիքներ փաստաթղթով հորդորում է անդամ երկրներին ներդաշնակեցնել և քրեական պատասխանատվության ենթակա արարք համարել մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, ներառյալ ցեղասպանությունը հրապարակայնորեն քաջալերելը, ժխտելը, հերքելը, մերժելը, ուրանալը և այլն:

Այս համատեքստում ներկայումս հատկապես կարևորվում է Հայոց ցեղասպանությունը ուրանալու նկատմամբ հայրենի օրենսդրության ճշտումն ու հստակեցումը:

Ակնհայտ է, որ ցեղասպանություն վերապրած ժողովուրդը, ունենալով անկախ պետականություն ի դեմս Հայաստանի Հանրապետության չի կարող առանձնակի չշեշտել Հայոց Մեծ եղեռնը ուրանալու կամ դրա փորձերի նկատմամբ իր վերաբերմունքը: Ուստի՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության պատգամավորական խմբակցությունը շրջանառության մեջ է դրել քրեական օրենսգրքի 397.1 հոդվածում լրացում կատարելու օրինագիծ: Այս օրինագծի համաձայն, Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում իրագործված Հայոց ցեղասպանությունը հերքելը, մեղմացնելը, հավանություն տալը, արդարացնելը կամ ուրանալը պատժվում է տուգանքով և/կամ երեքից հինգ տարի ժամկետով ազատազրկմամբ:

Հուսով ենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մյուս խմբակցություններն ու պատգամավորները կմիանան ՀՅԴ այս նախաձեռնությանը՝ կողմ քվեարկելով օրինագծին:

Բայց օրինագծի ընդունումն ու գործադրումը դեռևս բավարար չէ Հայոց ցեղասպանության ուրացման դեմ պետական մակարդակով պայքարն ամբողջությամբ արդյունավետ դարձնելու համար: Կարծում եմ, որ արդեն իսկ աշխարհի 20-ից ավելի երկրների կողմից Հայոց Մեծ եղեռնի ճանաչումն ու դատապարտումը, Հայոց ցեղասպանության 95 և 100-ամյակների սպասվող հիշատակումները մեզանից պահանջում են արժանապատվության բարձր զգացումով ջանքերի համախմբում՝ հաղորդելու նոր թափ ճանաչման և դատապարտման գործընթացին: Եթե մինչև անկախության ձեռք բերումը և նույնիսկ մինչև այժմ Հայոց ցեղասպանության ու հայրենազրկման միջազգային ճանաչման հիմնական բեռը կրում էին սփյուռքը՝ Հայ դատի գրասենյակներով, առանձին կազմակերպություններ, հայորդիներ ու հայասեր շատ անձինք, ապա ներկայումս այս գործընթացին իր անմիջական և լեգիտիմ մասնակցությունը պետք է ունենա Հայաստանի Հանրապետությունը: Ահա թե ինչու կարևորվում է նաև նոր օրինագծերի ընդունումը՝ ապահովելու համար պետության կազմակերպական, կառավարչական, ֆինանսական, կադրային, տեղեկատվական և այլ գործառութային մասնակցությունը՝ Հայոց ցեղասպանությունը միջազգայնորեն ճանաչելու և դատապարտելու, դրա հետևանքները վերացնող և/կամ նվազեցնող պահանջատերն ու իրավատերը և Հայոց պետականության ամրապնդման հիմնական կրողը լինելու համար:

Այս պահին առկա են մի շարք հարցեր, որոնք կարիք ունեն օրենսդրական լուծման: Մենք աշխատում ենք այս ուղղությամբ և պատրաստ ենք լսելու ցանկացած կառուցողական առաջարկ:




Ռուբեն Հովսեփյան

# Մեր մեծ ժամանակակիցը

Խմորատաշտից, սովորաբար, մի գունդ են առանձնացնում՝ վաղվա շաղախի համար: Վաղվա շաղախն ինքնիրեն էլ կթթվի, և թթխմոր ասածը խմորը սոսկ հասունացնելու համար չէ: Թթխմորը երեկվա հացի որակը փոխանցողն է:

Քսաներորդ դարի մշակութային տաշտից, նախախնամությունը, որպես մերան, որպես մայա, որպես մակարդ, որպես պատվաստ, որպես թթխմոր, Սոս Սարգսյանին պահեց քանմեկի համար: Իրեն վիճակվեց բոլոր դարասկզբներին հատուկ անկանոն, հեղափոխական ու կեղծ հեղափոխական քաոսի մեջ փորձել պահպանել արդեն ձեռք բերվածը՝ հայի որակը, հայի կերպարը, հայի տեսակը: Նրա այս նոր դերն այլևս բեմական չէ, հերթական չէ, ցուցադրական չէ, թերևս, նույնիսկ տեսանելի չէ, որքան էլ արտառոց հնչեն այս որակումները դերասանի վերաբերյալ: Նա վաղուց արդեն ազատագրվել է մասնագիտու-



# «Չկշտացա իմ երկրից...»

Սոս Սարգսյան



թյան սահմաններից և ավելին է, քան դերասանը, ինչպես Բանաստեղծն է ավելին լինում, քան բանաստեղծը, ինչպես Դարբինն է ավելին լինում, քան դարբինը: Այլևս կարևոր չէ՝ խաղո՞ւմ է Սոսը թատրոնում, կինոյում, թե ոչ, գի՞րք է գրում, թե թատրոն ստեղծում, ծառատունկ է անում, թե դասավանդում... Կարևորն արդեն նրա ներկայությունն է խառնափնթոր մեր այս օրերում, երբ նորի ծիլը կարող է խեղդվել, թերևս, նաև խեղդվում է, մոլախոտի առատությունից: Նա թթխմորի իր գործն է անում: Խմորի ներսում, անշշուկ, հետևողական, համբերատար: Նրա բնազդն ու բանականությունը վաղուց արդեն հաշտ են ապրում: Նա գիտե, որ որակը ժառանգաբար չի փոխանցվում: Որակը ստեղծվում է ամեն օրվա աշխատանքով: Նա գիտե, որ մոլախոտը կենսունակ է, իսկ կուլտուրան խնամքի է կարոտ: Եվ եթե աստված կուլտուրային չի օժտել ժառանգականությամբ, որովհետև իր ստեղծածը չէ, այլ քոնը, ապա բարի եղիր ինքդ ջանալ, ժառանգականությանը հավասարազոր միջոցներ հայտնագործել: Մարդու հայտնագործած մերանը, մայան, մակարդը, պատվաստը, թթխմորը հենց այդ միջոցներն են:

Բայց միջոց հայտնագործելուց առավել, միջոց դառնալն է կարևորը, խմորի, կաթի, ծառի, բույսի, հասարակության մեջ տարրալուծվելու, որակը փոխանցելու աստվածային հատկությունը, ինչով օժտված է մեր մեծ ժամանակակիցը:

№ 10—11 (207) XIX ՏԱՐԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ—ՆՈՅԵՄԲԵՐ 190

roschak" ORGANE la Fédération évolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse: RÉDACTION DU JO „Droscha GENÈVE (Sui

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

**Ինքնապաշտպանութիւն**

Հ.Յ.Դաշնակցութեան Ե Ընդհանուր Ժողովը հաւանութիւն տալով Պարսկաստանի եւ Կովկասի մարմիններու գործունէութեանը Պարսկաստանի մէջ, գտնելով, որ այդ քայլերը եղած են Դ Ընդհ. Ժողովի որոշումներու կիրառումը, ժամանակի եւ տեղի պահանջներու համաձայն, եւ լսելով զեկուցումներ ապագայ մեր ընելիքներու մասին,

Ու նկատելով՝

ա) Որ պարսկական շարժումները, ուղղուած աւատական դրութեան դէմ՝ սօցիալական յեղաշրջման բնոյթ ունին.

բ) Որ Պարսկաստանի վերածնութիւնը իր մեծ օգուտը ունի Թիւրքիոյ, Կովկասի եւ մօտաւոր արեւելքի վերածնութեան համար.

գ) Որ Պարսկաստանի ներկայ շարժման յաջողութեանը մէջ է կայանալու եւ պարսկահայ ժողովրդի ազգային, կուլտուրական եւ տնտեսական շահերու բարգաւաճումը.

դ) Որ Դաշնակցութիւնը իր ակտիւ մասնակցութեամբ Պարսկաստանի շարժումներու մէջ՝ կը վերահաստատէ այն հասարակական-կուլտուրական կապը մեր եւ մահմետական ժողովուրդներու միջեւ, որ դարերէ ի վեր խզւեր է.

ե) Որ մեր յարաբերութիւններու այդ նոր շրջանը իր անվիճելի օգուտն ունի մեր եւ մահմետական ժողովուրդներու մերձեցման տեսակէտէ՝ Կովկաս ինչպէս նաեւ Թիւրքիա.

Որոշեց՝

Արտօնել Պարսկաստանի դաշնակցական իրաւասու մարմինները, «որոնք մինչեւ այժմ պաշտօնապէս նկատուած են իբր օժանդակ Թիւրքիոյ եւ Կովկասի հանդէպ» հրապարակ գալու իբրեւ յեղափոխական գործօն մարմիններ:

Նաեւ ատոր հետ Ընդհանուր Ժողովը կը հրահանգէ՝

1) Սերտ կապ պահպանել պարսիկ ժողովուրդի դեմօկրատիկ տարրերու հետ, կատարելով ընելիք բոլոր քայլերը համագործակցութեամբ անոնց հետ.

2) Աշխատիլ առաջ բերել անոնց մէջ աշխատաւորական կուսակցութիւններ՝ համապատասխան Դաշնակցութեան աշխարհայեացքի.

3) Կանոնաւորել ներկայիս գոյութիւն ունեցող ազգային-կուլտուրական հիմնարկութիւններու ձեւերը եւ ապահովել զանոնք պետական հիմնական օրէնքներով:

Դաշնակցական մարմինները Պարսկաստանի մէջ գործնական պատասխանատու ձեռնարկներու դիմելէ առաջ՝ պէտք է որ ստանան կուսակցութեան բարձրագոյն պատշաճ մարմիններու համաձայնութիւնը:

**Տաքտիկա**

Քննելով կուսակցական տաքտիկը եւ նկատելով.

Որ սահմանադրութեան հաստատումով Թիւրքիոյ եւ Իրանի մէջ հնարաւորութիւն կայ կուսակցական նօրմալ աշխատանքի.

Որ այդ երկու երկրներու մէջ սահմանադրական կարգերը չեն ամրապնդուած եւ դեռեւս անոնց վտանգ կը սպառնայ ռէակսիօնի կողմէն,

Ընդհանուր Ժողովը որոշեց՝

1) Հրաժարիլ այժմեան Թիւրքիոյ եւ Իրանի մէջ, իբրեւ սահմանադրական երկիրներ, դաւադրական միջոցներու գործադրութենէն.

2) Կիրարկանել կազմակերպութեան մարտական բոլոր ուժերը սահմանադրութիւնը պաշտպանելու եւ ռէակսիօնի դէմ կռւելու համար:

Ժողովը միանգամայն կը հրահանգէ կազմակերպութեան մարմիններուն, Թիւրքիոյ մէջ օրինական բոլոր միջոցներով բողոքել ընկերակցութեան 3-4-րդ յօդուածներուն դէմ, որոնք փոխանակ նպաստելու ազգերու մերձեցման եւ սահմանադրական կարգերու հիմնաւորման, նոր դռներ պիտի բանան ներքին բարդութիւններու համար:

**Արեւմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները**
Գիտական զեկուցումների ժողովածու
Երեւան, 2009թ., 300 էջ




Նախ՝ երկու բառ ներկայացվող գրքի վերնագրի մասին:

Հայաստանի մայրաքաղաք Երեւանում հրատարակված գրքի վերնագիրը, փաստորեն, իր վրա կրում է, մեղմ ասած, ոչ հայամետ քարոզչության կնիքը: Ո՞վ է հորինել «արեւմտահայության պահանջատիրություն» հասկացությունը, կա՞ արդյոք «արեւելահայության պահանջատիրության» առանձին հասկացություն, կա՞ն արդյոք վրացահայերի եւ արցախահայերի առանձին-առանձին պահանջատիրություններ, վերջապես կա՞ արդյոք Հայաստանի Հանրապետության տարածքից ԱՄՆ ներգաղթած հայերի առանձին պահանջատիրություն: Մենք՝ հայերս, եթե այսքան «զանազան պահանջատիրություններ» ունենք, ձանձրալի չե՞նք դառնա, արդյոք, աշխարհի համար:

Հատկապես Հայաստանի Հանրապետության վերանկախացումից հետո Հայ Դատի ընդդիմախոսները ջանք չեն խնայել Հայաստանի Հանրապետությանը հեռու պահել Հայոց պահանջատիրության խնդիրներից, քանզի հասկանում էին, որ ՀՀ-ն, որպես միջազգային իրավունքի օբյեկտ, կարող է բազմապատկել հայության ջանքերը Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման եւ դրանից բխող խնդիրների հետապնդման գործում: Հայաստան-Սփյուռք այս համագործակցությունը խափանելու նպատակով էլ թուրքական լոբբին հրապարակ բերեց արեւելահայ-արեւմտահայ, Հայաստան-Սփյուռք կեղծ հակասության տեսությունը, որի համաձայն, իբր, Ցեղասպանության խնդիրը միայն արեւմտահայերի՝ հայկական Սփյուռքի հիմքը հանդիսացողների խնդիրն է: Այս թյուր տեսակետն այնպես է տարածվել աշխարհում, որ այսօր արդեն ծլարձակումներ է տալիս հայ իրականության մեջ եւ կարող է կործանարար լինել մեր ժողովրդի համար, եթե մենք՝ ինքներս, հանդուրժող լինենք այդ երեւույթի հանդեպ:

Գրքի նախաբանում, որի հեղինակները, այսպես կոչված, «Արեւմտահայերի համագումարի» նախապատրաստման կազմկոմիտեի անդամներ Անուշավան Դանիելյանն ու Կարեն Միքայելյանն են, միտք է արծարծվում, թե Հայոց պահանջատիրությունը (նկատենք, որ այնուամենայնիվ՝ Հայոց պահանջատիրությունը) կարող է իրական լինել, երբ ձեւավորվի ինքնուրույն հայկական գործոն: Շատ լավ: Եթե այդ պահանջատիրությունն այնուամենայնիվ Հայոց պահանջատիրություն է, ապա ինչպիսի՞ գործոն է Հայաստանի Հանրապետությունը, այդ նույն Հայոց պետականությունը: Ինքնուրույն չէ՞ այն: Եթե ոչ, ապա դա միանգամայն այլ հարց է ու այլ քննարկման թեմա, եւ հարգարժան պարոնայք Դանիելյանն ու Միքայելյանը պետք է ավելի շատ մտածեին Հայաստանի Հանրապետությունը դարձնել ինքնուրույն գործոն, փոխանակ քարոզելու ստեղծել Արեւմտահայերի ազգային ժո-

դով ու խորհրդարան՝ իր հանձնախմբերով, որը չգիտես, թե որքան ժամանակ հետո կկարողանա ինքնուրույն գործոն դառնալ Հայկական հարցի հետապնդման ճանապարհին:

Մի ուշագրավ հանգամանք եւս: Նույն նախաբանում հղում կա «Հայաստանի Հանրապետություն» պարբերականի (հավանաբար՝ օրաթերթի) 2007 թվականի փետրվարի 20-ի թողարկմանը, ուր այսպիսի մի հարցադրում կա. «Կարո՞ղ էին, արդյոք, հայերը խուսափել նոր պարտություններից ու կորուստներից»: Հեղինակները նկատի ունեն վերջին 150 տարիներին մեր կրած պարտություններն ու կորուստները: Այդ ժամանակահատվածին քիչ թե շատ ծանոթ մարդու համար պատասխանը հստակ է՝ այո կարող էին, եթե հանգամանքներն այլ կերպ դասավորվեին, եթե խորհրդային պատմական անցքերով պայմանավորված չլինեին մեր ճակատագիրը: Հեղինակների դիրքորոշումը, սակայն, այլ է: Մեղավորը հայերն են, պնդում են նրանք, որովհետեւ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ չկարողացան խուսափել վտանգներից, մեծամասշտաբ աղետներից, որոնց, իբր թե, «անխուսափելիությունը» մշտապես եւ մեթոդապես արմատավորվում էր հանուն ինքնորդարացման եւ ազգային-ազատագրական պայքարի ուղու վերագնահատման հրաժարման որովհետեւ չկարողացան կենսագործել Սեւրի պայմանագրի որոշումները չկարողացան կասեցնել խորհրդա-քեմալական ագրեսիան պատրաստ չէին «Վերակառուցմանը» եւ ԱՀՄ փլուզմանը:
Դատելով գրքում տեղ գտած գիտական հոդվածներից, որոնց հեղինակները հիմնականում փորձում են միջազգային իրավունքի տեսակետից մեկնաբանել Հայկական հարցի լուծման հնարավոր ուղիները, գալիս ենք այն եզրակացության, որ նրանք Հայաստանում եւ Սփյուռքում հայտնի մասնագետներ, բնավ էլ խանդավառ չպետք է լինեն նման մի վերնագրով գրքում իրենց հոդվածների հրապարակման փաստով, մանավանդ, որ, ինչպես մեզ հուշում են «Արեւմտահայերի համագումար»-ի կազմկոմիտեի ներկայացուցիչները, Նիկոսիայում տեղի ունեցած գիտագործնական սեմինարը, որտեղ ընթերցվել են գիտական զեկուցումները հերթական փայլն է այսպես կոչված «Արեւմտահայերի պահանջատիրությունը» հետապնդելու նպատակով «այնքան անհրաժեշտ» դարձած նոր կազմակերպություն ստեղծելու ճանապարհին:

Հուսանք, որ գրքում տեղ գտած հոդվածների հեղինակներից շատերը կվերանայեն իրենց մասնակցությունը նման մի ձեռնարկի, քանզի Հայոց պահանջատիրությունը միջազգային օրենքների լույսի տակ քննարկելու եւ լուծումներ գտնելու գիտական մոտեցումները ոչ մի կերպ չեն կարող հակասության մեջ լինել Հայ դատի եւ ՀՀ քաղաքական, տարածաշրջանային եւ անվտանգության խնդիրների հետ: Զարմանալի է, որ «Արեւմտահայերի պահանջատիրություն» վերնագիրը անգամ նրանց զգուշանալու առիթ չի տվել:

Էդիկ Անդրեասյան



# Տարոն Մուրադյան

Տարոն Մուրադյան

Տարոն Մուրադյանը ծնվել է 1961թ. Երեւանում: 1978-1982թթ. սովորել է Երեւանի Փանոս Թերլեմեզյանի անվան Նկարչական քոլեջում, իսկ 1984-1990 թվականներին ուսանել է Երեւանի Գեղարվեստի Ակադեմիայում: 2001 թվականից Հայաստանի Նկարիչների Միության անդամ է:

Տարոն Մուրադյանը մասնակցել է մի շարք հավաքական ցուցադրությունների, ունեցել է նաեւ անհատական ցուցահանդեսներ: Դրանցից են 1987թ. Երեւանի Նկարիչների Միությունում կազմակերպված ցուցադրությունը, Փարիզի «Գրանդ Պալասում» կայացած Անկախ Նկարիչների ցուցադրությունը 1993-ին, Գերմանիայի Շլայխեր քաղաքում կազմակերպված «Հայկական գույները»1998-ին, եւ հաջորդաբար Երեւանում կազմակերպված ցուցահանդեսները:

Տարոն Մուրադյանը անհատական ցուցահանդեսներ է ունեցել Փարիզի Մուվանս պատկերասրահում 1993, 1996, 2000, 2002, 2004, 2005 թվականներին, Երեւանի Ժամանակակից Արվեստի թանգարանում 2001թ., 2003թ. Նյու Յորքի միջազգային Արտէքսպոյում, ինչպես նաեւ Շվեյցարիայում, Դանիայում, Հոլանդիայում:

Տարոն Մուրադյանը ասում է. «Գեղարվեստի հրաշքը լեգենդի վերապատմումն է, երբ պատմությունը եւ արդի ժամանակաշրջանը խառնվում են իրար եւ հայտնվում իդեալների լույսի ներքո, ինչը հասկանալի է բոլոր մարդկանց, եւ որի մեջ է հենց իսկական ճշմարտությունը: Ճշմարիտ արվեստը քննության չի ենթարկվում, այն պետք է պարզապես զգալ»:
















ARMENIAN
GENOCIDE
1915 - 1923
2 million
DONUT PEACHES
$1.99
SWEET LYCHEE NUTS
$3.99 POUND
ԴՐՕՇԱԿ
RECOGNIZE
THE ARMENIAN GENOCIDE
WWW.GENOPOSTS.COM